

## Նախագիծ, չխմբագրված տարբերակ

Տարածումը. ընդհանուր  
27-ը հունիսի, 2020 թ.

Բնօրինակը՝ անգլերեն  
Ոչ պաշտոնական  
թարգմանություն

### Մարդու իրավունքների հանձնաժողով

## Ընդհանուր մեկնաբանություն թիվ 37

### Հոդված 21. Խաղաղ հավաքների իրավունքը\*

#### I. Ընդհանուր դիտարկումներ

1. Խաղաղ հավաքների հիմնական իրավունքը մարդկանց ընձեռում է կոլեկտիվ եղանակով արտահայտվելու և իրենց հասարակության ձևակերտմանը մասնակից դառնալու հնարավորություն: Խաղաղ հավաքների իրավունքն ինքնին շատ կարևոր է, քանի որ ներառում է անհատական ինքնուրույնությունն ուրիշների հետ համերաշխությամբ դրսևորելու՝ մարդու իրավունքի պաշտպանությունը: Հարակից այլ իրավունքների հետ միասին՝ այն ժողովրդավարության, մարդու իրավունքների, իրավունքի գերիշխանության և բազմակարծության վրա հիմնված մասնակցային պետական կառավարման համակարգի անկյունաքարն է: Խաղաղ հավաքները կարող են կենսական դերակատարում ունենալ՝ մասնակիցներին հնարավորություն ընձեռելով հանրային դաշտում առաջ մղել իրենց գաղափարները և հավակնային նպատակները, ինչպես նաև՝ պարզել այդ գաղափարներին և նպատակներին կողմ կամ դեմ անձանց շրջանակը: Դժգոհությունը բարձրաձայնելու նպատակին ծառայելու դեպքում խաղաղ հավաքները կարող են տարակարծությունները ներառական, մասնակցային և խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու հնարավորություններ ստեղծել:

2. Ավելին, խաղաղ հավաքների իրավունքն արժեքավոր գործիք է, որը կարող է կիրառվել և նախկինում փաստացի կիրառվել է բազմաբնույթ այլ իրավունքներ ճանաչելու և իրականացնելու համար՝ ներառյալ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Այն առանձնահատուկ կարևորություն ունի արտամղված (մարգինալացված) անհատների և խմբերի համար: Խաղաղ հավաքների իրավունքը չհարգելը և չերաշխավորելը որպես կանոն բռնաճնշումների ցուցիչ է:

\* Ընդունվել է Հանձնաժողովի կողմից 129-րդ նստաշրջանում (29 հունիսի-24 հուլիսի, 2020 թ.):

3. Բաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածի առաջին նախադասությամբ ամրագրվում է հետևյալը. «Ճանաչվում է խաղաղ հավաքների իրավունքը»: Իրավունքն համանման ձևակերպմամբ ամրագրված է նաև միջազգային այլ փաստաթղթերում,<sup>1</sup> և իրավունքի բովանդակությունը պարզաբանվել է միջազգային մարմինների կողմից, մասնավորապես՝ վերջիններիս հրապարակած եզրակացություններում, ավարտական դիտարկումներում, բանաձևերում, մեկնաբանող ուղեցույցներում և դատական որոշումներում:<sup>2</sup> Խաղաղ հավաքների իրավունքի ճանաչելու՝ միջազգային իրավունքի նորմերից բխող պարտավորությունը կրելուց զատ, պետությունների ճնշող մեծամասնությունն այս իրավունքը ճանաչել է նաև ազգային սահմանադրություններում:<sup>3</sup>

4. Խաղաղ հավաքների իրավունքով պաշտպանվում են կոնկրետ նպատակներով, գլխավորապես՝ արտահայտվելու նպատակով անձանց ոչ բռնի հավաքները:<sup>4</sup> Խաղաղ հավաքների իրավունքն անհատական իրավունք է, որն իրականացվում է կոլեկտիվ կերպով:<sup>5</sup> Ուստի, այս իրավունքի բաղադրիչն է նաև միավորվելու իրավունքը:

5. Խաղաղ հավաքների իրավունք ունի յուրաքանչյուր ոք՝ ներառյալ թե՛ քաղաքացիները, թե՛ ոչ քաղաքացի անձինք: Այդ իրավունքը կարող են իրականացնել, օրինակ, օտարերկրյա քաղաքացիները,<sup>6</sup> միգրանտները

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդվ. 20 (1)), Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիան (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան) (հոդվ. 11), Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան (հոդվ. 15), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (հոդվ. 11): Մարդու իրավունքների արաբական խարտիայով պաշտպանվում է քաղաքացիների իրավունքը (հոդվ. 28): Խաղաղ հավաքներին մասնակցելու հետ կապված որոշակի պարտավորություններ կարելի է գտնել նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում (հոդվ. 15), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (հոդվ. 5 (դ) (ix)), ինչպես նաև Երեխայի իրավունքների և բարօրության մասին աֆրիկյան խարտիայում (հոդվ. 8):

<sup>2</sup> Որպես տարածաշրջնային մեխանիզմի օրինակ, տե՛ս Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշների* 3-րդ հրատարակությունը (2019 թ.), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում միավորման և հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները* (2017 թ.), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում իրավապահ մարմինների կողմից հավաքների իրականացվող կատարվող իրավապահ ծառայության վերաբերյալ ուղենիշները* (2017 թ.), Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի Արտահայտվելու ազատության հարցերով հատուկ գեկուցողի գրասենյակի *Բողոքի ցույցերի և մարդու իրավունքների ստանդարտները սոցիալական բողոքի ցույցերի իրավունքների և պետության արձագանքը պայմանավորող պարտավորությունների մասին* (2019 թ.):

<sup>3</sup> Միավորված ազգերի կազմակերպության 193 անդամներից 184-ն իրենց սահմանադրություններում ճանաչում են խաղաղ հավաքների իրավունքը, տե՛ս [www.rightofassembly.info](http://www.rightofassembly.info):

<sup>4</sup> Համեմատության համար տե՛ս *Kivenmaa v. Finland* (CCPR/C/50/D/412/1990), պարբ. 7.6, *Sekerko v. Belarus* (CCPR/C/109/D/1851/2008), պարբ. 9.3, և *Poplavny v. Belarus* (CCPR/C/118/D/2139/2012), պարբ. 8.5:

<sup>5</sup> Համեմատության համար տե՛ս թիվ 31 (2004) ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 9:

<sup>6</sup> Տե՛ս թիվ 15 (1986) ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 1–2, ինչպես նաև CCPR/C/KWT/CO/3, պարբ. 42:

(փաստաթուղթ ունեցող կամ չունեցող),<sup>7</sup> ապաստան հայցողները և փախստականները,<sup>8</sup> ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք:

6. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածով խաղաղ հավաքները պաշտպանված են՝ անկախ դրանց տեղի ունենալու վայրից՝ դրսում, ներսում և համացանցում, հանրային և մասնավոր տարածքներում, կամ՝ դրանց որոշակի համադրության պայմաններում: Նման հավաքները կարող են տարաբնույթ ձևեր ունենալ՝ ներառյալ ցույցեր, բողոքի ցույցեր, միտինգներ, երթեր, քայլերթեր, նստացույցեր, հիշատակի մոմավառությունները և ֆլեշմոբերը: Դրանք 21-րդ հոդվածով պաշտպանված են՝ անկախ անշարժ (օրինակ՝ պիկետներ) կամ շարժական (օրինակ՝ երթեր կամ քայլերթեր) լինելու հանգամանքից:

7. Մի շարք դեպքերում խաղաղ հավաքները վիճահարույց նպատակ չեն հետապնդում և չեն խաթարում կամ գրեթե չեն խաթարում կյանքի բնականոն ընթացքը: Նպատակը կարող է լինել, օրինակ, ազգային տոն նշելը կամ մարզական միջոցառման արդյունքը տոնելը: Այնուամենայնիվ, խաղաղ հավաքները երբեմն կարող են վիճահարույց գաղափարներ կամ նպատակներ հետապնդել: Դրանց մասշտաբը կամ բնույթը կարող են խաթարել, օրինակ, տրանսպորտային միջոցների կամ հետիոտների շարժը կամ տնտեսական գործունեությունը:<sup>9</sup> Այդ հետևանքները՝ դիտավորյալ թե՛ ակամա, հարցականի տակ չեն դնում հավաքներին հասանելիք պաշտպանությունը: Այնքանով, որքանով նման միջոցառումը կարող է խաթարում կամ ռիսկեր առաջացնել, այն պետք է կառավարվի Դաշնագրով նախատեսված սահմաններում:

8. Խաղաղ հավաքների իրավունքի ճանաչումն համապատասխան պարտավորություններ է առաջացնում մասնակից պետությունների համար՝ հարգելու այդ իրավունքը և ապահովելու դրա իրականացումը՝ բացառելով խտրականությունը:<sup>10</sup> Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի պետությունները թույլատրեն հավաքների կազմակերպումն առանց անհարկի միջամտության և աջակցեն իրավունքի իրականացմանը և պաշտպանեն մասնակիցներին: 21-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ նախատեսվում են հնարավոր սահմանափակումների հիմքերը, սակայն ցանկացած նման սահմանափակում պետք է կիրառել հնարավորինս նեղ շրջանակով: Իրավունքի հնարավոր սահմանափակման նկատմամբ նույնպես փաստացի կիրառել են որոշակի սահմանափակումներ:

9. Խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք պաշտպանությունն հնարավոր է միայն այն ժամանակ, երբ այլ՝ հաճախ համընկնող իրավունքները նույնպես պաշտպանված են. դա վերաբերում է, մասնավորապես, արտահայտվելու ազատությանը, միավորվելու ազատությանը և քաղաքական մասնակցությանը:<sup>11</sup> Խաղաղ հավաքների իրավունքի պաշտպանությունն հաճախ կախված է նաև

<sup>7</sup> CCPR/C/DOM/CO/6, պարբ. 32:

<sup>8</sup> CCPR/C/NPL/CO/2, պարբ. 14:

<sup>9</sup> CCPR/C/KOR/Q/4, պարբ. 26:

<sup>10</sup> ԶԶԻՄԴ, հոդվ. 2 (1):

<sup>11</sup> Համեմատության համար տե՛ս A/HRC/39/28, պարբ. 14:

քաղաքացիական և քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ավելի լայն շրջանակի իրականացումից: Երբ անձինք իրենց վարքագծի հետևանքով դուրս են հայտնվում 21-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության շրջանակից, օրինակ՝ քանի որ բռնի վարքագիծ են դրսևորել, նրանք շարունակում են օգտվել Դաշնագրով երաշխավորված իրենց այլ իրավունքներից՝ կիրառելի սահմաններով և սահմանափակումներով հանդերձ:

10. Հավաքների անցկացման ձևը և համատեքստը ժամանակի ընթացքում փոխվում են: Դա իր հերթին կարող է ազդել հավաքների նկատմամբ իշխանությունների վերաբերմունքի վրա: Օրինակ, կապի նորագույն տեխնոլոգիաներն հնարավորություն են ընձեռում ամբողջովին կամ մասամբ հավաքն անցկացնել համացանցում: Այդ նույն տեխնոլոգիաներն հաճախ կարևոր դեր են խաղում ֆիզիկական հավաքների կազմակերպման, դրանց մասնակցելու և մշտադիտարկելու հարցերում, որը նշանակում է, որ կապի այդ տեխնոլոգիաներով տեղի ունեցող հաղորդակցության նկատմամբ միջամտությունը կարող է խոչընդոտել հավաքի ընթացքը: Թեպետ դիտարկման և հսկողության տեխնոլոգիաները կարող են կիրառվել բռնության վտանգներն հայտնաբերելու և այդ կերպ հանրությանը պաշտպանելու նպատակով, դրանք կարող են միևնույն ժամանակ նաև խախտել մասնակիցների և տարածքում գտնվող կողմնակի անձանց անձնական կյանքի իրավունքը և կաշկանդող ազդեցությունն ունենալ իրավունքի իրականացման վրա: Ավելին, հանրությանն հասանելի տարածքները և հաղորդակցության և կապի հարթակները գնալով ավելի հաճախ են դառնում մասնավոր սեփականության և վերահսկողության այլ ձևերի առարկա: 21-րդ հոդվածով երաշխավորված իրավական շրջանակի մերօրյա ընկալումները պետք է պայմանավորել հենց այս տիպի հանգամանքներով և նկատառումներով:

## II. Խաղաղ հավաքների իրավունքի շրջանակը

11. Հավաքին անձի մասնակցության՝ 21-րդ հոդվածով պաշտպանված լինելու կամ չլինելու հանգամանքը պարզելու գործընթացը բաղկացած է երկու փուլից: Առաջին հերթին պետք է պարզել, թե արդյոք տվյալ անձի վարքագիծը տեղավորվում է տվյալ իրավունքի պաշտպանության *շրջանակի* մեջ, այսինքն՝ արդյոք դա կարող է համարվել մասնակցություն «խաղաղ հավաքին» (սույն բաժնում նկարագրված իմաստով): Եթե այո, ապա պետությունը պարտավոր է հարգել և երաշխավորել մասնակիցների իրավունքները (3-րդ բաժնում նկարագրված իմաստով): Երկրորդը, պետք է պարզել, թե արդյոք տվյալ իրավունքի իրականացման նկատմամբ կիրառված *սահմանափակումները* տվյալ համատեքստում իրավաչափ են (4-րդ բաժնում նկարագրված իմաստով):

12. «Հավաքին» մասնակցելը ենթադրում է կոնկրետ հարցի վերաբերյալ արտահայտվելու, դիրքորոշում հայտնելու կամ գաղափարներ փոխանակելու և համանման այլ նպատակի համար մարդկանց հավաք կազմակերպել կամ կազմակերպված հավաքին մասնակցել: Հավաքի նպատակ կարող է լինել նաև նաև խմբային համերաշխությունը կամ ինքնությունն ի ցույց դնելը կամ ամրապնդելը:

Հավաքները կարող են այդ նպատակներն հետապնդելուց զատ նաև ծառայել այլ նպատակների, օրինակ՝ ժամանցային, մշակութային, կրոնական կամ առևտրային, և այդ պարագայում նույնպես օգտվել 21-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից:

13. Թեպետ «հավաք» հասկացությունից տրամաբանորեն բխում է, որ հավաքի մասնակիցների թիվը մեկից ավելի կլինի,<sup>12</sup> միայնակ ցուցարարն օգտվում է Դաշնագրով նախատեսված համանման պաշտպանությունից, օրինակ՝ 19-րդ հոդվածի ներքո: Թեպետ խաղաղ հավաքների իրավունքի իրականացումը որպես կանոն վերաբերում է մարդկանց ֆիզիկապես հավաքվելուն, 21-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը տարածվում է նաև, օրինակ, համացանցում հեռավար եղանակով հավաքներ կազմակերպելու և համացանցում կազմակերպվող հավաքներին հեռավար եղանակով մասնակցելու նկատմամբ:<sup>13</sup>

14. Խաղաղ հավաքներն հաճախ նախապես են կազմակերպվում՝ կազմակերպիչներին ժամանակ թողնելով, որպեսզի նրանք հասցնեն ծանուցել իրավասու պետական մարմիններին՝ վերջիններիս կողմից նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքները կազմակերպելու համար: Այնուամենայնիվ, ինքնաբուխ հավաքները, որոնք սովորաբար տեղի են ունենում ուղղակիորեն արձագանքելով ընթացիկ իրադարձություններին, անկախ դրանց համակարգված լինելու կամ չլինելու հանգամանքից, հավասար չափով պաշտպանված են 21-րդ հոդվածով: Հակահավաքներ տեղի են ունենում այն ժամանակ, երբ մեկ հավաքը տեղի է ունենում մյուսին անհամաձայնություն հայտնելու կամ հակադրվելու նպատակով: Երկու հավաքներն էլ կարող են օգտվել 21-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության շրջանակից:

15. «Խաղաղ» հավաքն այն հավաքի հակադրությունն է, որը բնորոշվում է լայնատարած և լուրջ բռնությամբ: «Խաղաղ» և «ոչ բռնի» եզրույթները, հետևապես, սույն համատեքստում օգտագործվում են որպես հավասարազոր հոմանիշներ: Խաղաղ հավաքների իրավունքը սկզբունքորեն և իմաստաբանորեն չի կարող իրականացվել՝ գործադրելով բռնություն: «Բռնությունը» 21-րդ հոդվածի համատեքստում որպես կանոն ենթադրում է մասնակիցների կողմից այլ անձանց նկատմամբ այնպիսի ֆիզիկական ուժի գործադրումը, որն հավանաբար կարող է մարմնական վնասվածքի կամ մահվան պատճառ դառնալ կամ լուրջ վնաս պատճառել գույքին:<sup>14</sup> Հրելը կամ հրմշտոցը կամ տրանսպորտային միջոցների կամ հետիոտների շարժը կամ առօրյա գործունեությունը խաթարելը չի կարող «բռնություն» համարվել:

16. Եթե հավաքի մասնակիցների վարքագիծը խաղաղ է, ապա այն փաստը, որ հավաքին վերաբերող ներպետական որոշ իրավական պահանջներ չեն բավարարվել հավաքի կազմակերպիչների կամ մասնակիցների կողմից, ինքնին չի

<sup>12</sup> *Coleman v. Australia* (CCPR/C/87/D/1157/2003), պարբ. 6.4:

<sup>13</sup> A/HRC/41/41:

<sup>14</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 51:

նշանակում, որ մասնակիցները հայտնվում են 21-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության շրջանակից դուրս:<sup>15</sup> 21-րդ հոդվածը կարող է կիրառելի լինել նաև կոլեկտիվ քաղաքացիական անհնազանդության կամ անմիջական ակցիայի տեսքով կազմակերպվող արշավների նկատմամբ՝ պայմանով, որ դրանք չլինեն բռնի:<sup>16</sup>

17. Խաղաղ և ոչ խաղաղ հավաքների միջև բաժանարար գիծը ոչ միշտ է հստակ, սակայն կանխավարկածն այն է, որ հավաքները պետք է նախնառաջ համարվեն խաղաղ:<sup>17</sup> Ավելին, որոշ մասնակիցների կողմից բռնության առանձին գործողությունները չպետք է վերագրվեն ուրիշներին, կազմակերպիչներին կամ ողջ հավաքին:<sup>18</sup> Այսինքն, հավաքի որոշ մասնակիցների նկատմամբ կարող է կիրառելի լինել 21-րդ հոդվածը, իսկ միևնույն հավաքի որոշ այլ մասնակիցների նկատմամբ՝ ոչ:

18. Այն հարցին, թե արդյոք հավաքը խաղաղ է, պետք է պատասխանել՝ հիմք ընդունելով մասնակիցների գործողությունների հետևանքով առաջացող բռնությունը: Խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ իշխանությունների կամ վերջիններիս անուկից գործող *սադրիչ գործակալների (agents provocateurs)* կողմից կիրառվող բռնությունը չի կարող հավաքը ոչ խաղաղ հավաքի վերածել: Նույնը վերաբերում է հանրության անդամների կամ հակահավաքի մասնակիցների կողմից կողմից հավաքի նկատմամբ ուղղված բռնությանը:

19. Հավաքի կոնկրետ մասնակիցների պահվածքը կարող է բռնի համարվել, եթե իշխանությունները կարող են արժանահավատ ապացույցներ ներկայացնել առ այն, որ իրադարձությունից առաջ կամ դրա ընթացքում տվյալ մասնակիցներն այլ մասնակիցների դրդում են բռնություն գործադրել, և այդ գործողություններն հավանաբար կհանգեցնեն բռնության, կամ՝ մասնակիցներն ունեն բռնի մտադրություններ և պլանավորում են դրանք կյանքի կոչել, կամ՝ նրանց կողմից բռնությունն անխուսափելի է:<sup>19</sup> Նման վարքագծի առանձին դրսևորումները բավարար չեն, որպեսզի ողջ հավաքն համարվի ոչ խաղաղ, բայց երբ դա ակնհայտորեն լայն տարածում ունի հավաքի շրջանակում, ապա մասնակցությունն այդ հավաքին որպես այդպիսին այլևս չի օգտվում 21-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից:

20. Մասնակիցների կողմից այնպիսի առարկաներ ունենալը կամ կրելը, որոնք հանդիսանում են կամ կարող են համարվել զենք կամ պաշտպանական միջոցներ, օրինակ՝ հակազազներ կամ սաղավարտներ, ոչ բոլոր դեպքերում է բավարար,

<sup>15</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Frumkin v. Russia* (գանգատ թիվ 74568/12), դատավճիռը՝ 5-ը հունվարի, 2016 թ., պարբ. 97:

<sup>16</sup> Համեմատության համար տե՛ս CCPR/C/CHN-MAC/CO/1, պարբ. 16:

<sup>17</sup> A/HRC/31/66, պարբ. 18.

<sup>18</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան, *Women Victims of Sexual Torture in Atenco v. Mexico* գործը, դատավճիռը՝ 28-ը նոյեմբերի, 2018 թ., Series C No. 371, պարբ. 175, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Frumkin v. Russia*, պարբ. 99:

<sup>19</sup> Համեմատության համար տե՛ս Ռաբատի գործողությունների ծրագիրը (2012 թ.), A/HRC/22/17/Add.4, հավելվածը, պարբ. 29(f):

որպեսզի այդ մասնակիցների պահվածքն համարվի բռնի: Դա պետք է որոշել՝ ելնելով յուրաքանչյուր դեպքի կոնկրետ հանգամանքներից՝ ի թիվս այլ գործոնների հաշվի առնելով նաև զենք (հատկապես) կրելու վերաբերյալ ներպետական իրավակարգավորումները, տեղի մշակութային գործելակերպը, բռնության մտադրությունն ունենալու մասին վկայող փաստերի առկայությունը, ինչպես նաև այդ առարկաների առկայության պատճառով ստեղծվող՝ բռնության ռիսկը:

### III. Խաղաղ հավաքների իրավունքի առնչությամբ մասնակից պետությունների պարտավորությունը

21. Դաշնագիրը Մասնակից պետություններին պարտավորեցնում է «հարգել և երաշխավորել» Դաշնագրով նախատեսված բոլոր իրավունքները (հոդված 2 (1)), իրավական և այլ միջոցներ ձեռնարկել այդ նպատակին համնելու համար (հոդված 2 (2)) և ձգտել պատասխանատվություն ապահովել, և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ ընձեռել Դաշնագրով նախատեսված իրավունքների խախտումների համար (հոդված 2 (3)):<sup>20</sup> Ուստի, խաղաղ հավաքների իրավունքի առնչությամբ Մասնակից պետությունների պարտավորությունը տարբեր բաղադրիչներ է ներառում, թեպետ իրավունքը որոշ դեպքերում կարող է սահմանափակվել 21-րդ հոդվածով նախատեսված չափորոշիչների համաձայն:

22. Պետությունները պետք է թողնեն, որպեսզի մասնակիցներն ազատորեն որոշեն հավաքի նպատակները կամ հավաքում արտահայտվող բովանդակային կյուրը: Խաղաղ հավաքների նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը և կիրառվող սահմանափակումները, ուստի, սկզբունքորեն պետք է որևէ կերպ չազդեն բովանդակության վրա,<sup>21</sup> և չպետք է պայմանավորված լինեն մասնակիցների ով լինելով կամ իշխանությունների հետ նրանց ունեցած հարաբերություններով: Ավելին, թեպետ հավաքների «ժամանակը, տեղը և ձևը» կարող են որոշ հանգամանքներում իրավաչափ սահմանափակումների ենթարկվել 21-րդ հոդվածի ներքո, սակայն հաշվի առնելով, որ հավաքները սովորաբար գումարվում են կարծիքներ և դիրքորոշումներ արտահայտելու նպատակով, մասնակիցներին պետք է հնարավորինս թույլ տալ, որպեսզի նրանք հավաքն անցկացնեն թիրախային լսարանի «տեսադաշտում և լսարաշտում»:<sup>22</sup>

23. Խաղաղ հավաքներն հարգելու և երաշխավորելու պարտավորությունից պետության համար բխում են թե՛ նեգատիվ, թե՛ պոզիտիվ պարտավորություններ հավաքից առաջ և հետո, ինչպես նաև հավաքի ընթացքում: Նեգատիվ պարտավորությունը ենթադրում է, որ *չպետք է անհարկի միջամտություն* տեղի ունենա խաղաղ հավաքի նկատմամբ: Պետությունները պարտավոր են, օրինակ, չարգելել, չսահմանափակել, չարգելափակել, չցրել կամ չխաթարել խաղաղ

<sup>20</sup> Տե՛ս թիվ 31 ընդհանուր մեկնաբանությունը:

<sup>21</sup> Տե՛ս *Alekseev v. Russian Federation*, (CCPR/C/109/D/1873/2009), պարբ. 9.6: Տե՛ս նաև *Amelkovich v. Belarus* (CCPR/C/125/D/2720/2016), պարբ. 6.6, CCPR/C/GNQ/CO/1, պարբ. 54:

<sup>22</sup> *Strizhak v. Belarus*, (CCPR/C/124/D/2260/2013), պարբ. 6.5:

հավաքներն առանց ծանրակշիռ հիմնավորման, ինչպես նաև՝ չպատժել մասնակիցներին կամ կազմակերպիչներին առանց իրավաչափ պատճառի:

24. Ավելին, Մասնակից պետությունները որոշ պոզիտիվ պարտավորություններ ունեն՝ կապված խաղաղ հավաքների անցկացմանն օժանդակելու հետ և մասնակիցների հետապնդած նպատակների իրագործումն հնարավոր դարձնելու հետ:<sup>23</sup> Այսպես, պետությունները պարտավոր են բարենպաստ միջավայր ձևավորել խաղաղ հավաքների իրավունքը խտրականությունից զերծ իրականացնելու համար, և ձևավորել իրավական և ինստիտուցիոնալ դաշտ, որում այդ իրավունքն հնարավոր կլինի արդյունավետորեն իրականացնել: Երբեմն իշխանությունների կողմից ձեռնարկվող կոնկրետ միջոցառումներ կարող են պահանջվել: Օրինակ, կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի նրանք փողոցներ փակեն, երթևեկություն վերաուղղորդեն կամ անվտանգություն ապահովեն: Անհրաժեշտության դեպքում պետությունները պարտավոր են նաև մասնակիցներին *պաշտպանել* ոչ պետական սուբյեկտների կողմից հնարավոր բռնությունից և չարաշահումներից, մասնավորապես՝ հանրության այլ անդամների, հակացուցարարների և անվտանգության մասնավոր ծառայությունների ներկայացուցիչների կողմից դրսևորվող միջամտությունից կամ բռնությունից:<sup>24</sup>

25. Պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի օրենքները և դրանց մեկնաբանությունը և կիրառությունը խաղաղ հավաքների իրավունքի իրականացման գործընթացում չառաջացնեն խտրականություն՝ պայմանավորված, օրինակ, ռասայով, մաշկի գույնով, ազգությամբ, տարիքով, սեռով, լեզվով, գույքային դրությամբ, կրոնով կամ համոզմունքով, քաղաքական կամ այլ կարծիքով, ազգային կամ սոցիալական ծագմամբ, ծննդյան հանգամանքով, փոքրամասնության ներկայացուցիչ կամ տեղաբնիկ լինելու փաստով կամ որևէ այլ կարգավիճակով, հաշմանդամությամբ, սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ կամ որևէ այլ կարգավիճակով:<sup>25</sup> Առանձնակի ջանքեր պետք է գործադրել՝ ապահովելու համար այն անձանց խաղաղ հավաքների իրավունքի արդյունավետ և հավասար երաշխավորումը և պաշտպանությունը, ովքեր այնպիսի խմբի անդամ են, որը ենթարկվում կամ ենթարկվել է խտրականության, կամ՝ այն անձանց, ովքեր կարող են առանձնակի դժվարությունների բախվել հավաքի մասնակցելու գործում:<sup>26</sup>

<sup>23</sup> *Turchenyak v. Belarus* գործով (CCPR/C/108/D/1948/2010) կայացրած իր որոշումից ի վեր Յաննանոտովն հաճախ է կրկնել, որ հավաքին արձագանքելու շրջանակում պետության ձեռնարկած քայլերը «պետք է ուղղորդվեն այդ իրավունքի իրականացումն ապահովելու նպատակով» (պարբ. 7.4): Տե՛ս նաև CCPR/C/BEN/CO/2, պարբ. 33: Համեմատության համար տե՛ս A/HRC/20/27, պարբ. 33, Մարդու իրավունքների խորհրդի բանաձևը, 38/11, OP 4:

<sup>24</sup> *Alekseev v. Russian Federation* (CCPR/C/109/D/1873/2009), պարբ. 9.6:

<sup>25</sup> CCPR/C/GEO/CO/4, պարբ. 8, CCPR/C/MNG/CO/6, պարբ. 11, CCPR/C/RUS/CO/7, պարբ. 10, CCPR/C/PRY/CO/3, պարբ. 9: Համեմատության համար տե՛ս CRC/C/KEN/CO/3-5 պարբ. 27–28, Միավորված ազգերի կազմակերպության հռչակագիրը տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների մասին (A/RES/61/295), հոդվ. 2:

<sup>26</sup> A/HRC/31/66, պարբ. 16:



Ավելին, պետությունները պարտավոր են մասնակիցներին պաշտպանել խտրական բռնության և ոտնձգությունների բոլոր ճևերից:<sup>27</sup>

26. Խաղաղ հավաքների իրավունքը չի բացառում հանրության այլ անդամների կողմից հավաքի մասնակիցների գործողություններին կամ կարծիքներին անհամաձայնություն հայտնելը: Պետությունները պարտավոր են հարգել և երաշխավորել ոչ միայն հավաքները, այլ նաև՝ հակահավաքները, միևնույն ժամանակ բացառելով այն հավաքների անհարկի խաթարումը, որին դեմ կազմակերպվել են հակահավաքները:<sup>28</sup> Պետությունները սկզբունքորեն պարտավոր են չեզոք դիրքորոշում որդեգրել հակահավաքների բովանդակության նկատմամբ, և պետք է թույլ տալ, որպեսզի հակահավաքներն հնարավորինս տեղի ունենան այն հավաքի տեսադաշտում և լսադաշտում, որի դեմ ուղղված են այդ հակահավաքները:

27. Խաղաղ հավաքի հետևանքով հանրության որոշ անդամների մոտ բացասական կամ անզամ բռնի ռեակցիա առաջանալու հնարավորությունը բավարար հիմք չէ հավաքն արգելելու կամ սահմանափակելու համար:<sup>29</sup> Պետությունները պարտավոր են հավաքի բոլոր մասնակիցներին պաշտպանելու և հավաքն առանց ընդհատման անցկացնելն հնարավոր դարձնելու ուղղությամբ ձեռնարկել ողջամիտ բոլոր այն քայլերը, որոնք անհամաչափ բեռ չեն առաջացնի իրենց համար:<sup>30</sup>

28. Խաղաղ հավաքներն հարգելու և երաշխավորելու պարտավորության իրականացման կարևորագույն նախապայմաններ են գործունակ և թափանցիկ իրավական համակարգը և որոշումների կայացման համակարգը: Ներպետական օրենսդրությամբ պետք է ճանաչել խաղաղ հավաքների իրավունքը, հստակորեն սահմանել մասնակից բոլոր սուբյեկտների պարտավորությունները և պարտականությունները, համապատասխանել միջազգային վերաբերելի չափանիշներին և հասանելի լինել հանրությանը: Պետությունները պարտավոր են ապահովել հանրության իրազեկությունն օրենքի և համապատասխան իրավակարգավորումների, այդ թվում՝ այն ընթացակարգերի վերաբերյալ, որոնք պետք է պահպանեն իրավունքն իրականացել ցանկացողները: Պետությունները պարտավոր են պարզաբանել, թե ովքեր են պատասխանատու պետական մարմինները, նրանց նկատմամբ կիրառելի կանոնները և իրավունքների ենթադրյալ խախտումների դեպքում առկա՝ իրավունքի պաշտպանության միջոցները:

29. Մասնակից պետությունները պարտավոր են ապահովել անկախ և թափանցիկ վերահսկողությունը խաղաղ հավաքներին մասնակցող բոլոր մարմինների նկատմամբ, այդ թվում՝ պաշտպանության արդյունավետ միջոցները,

<sup>27</sup> CCPR/C/CHL/CO/6, պարբ. 19: Տե՛ս նաև *Fedotova v. Russian Federation* (CCPR/C/106/D/1932/2010), պարբ. 10.4:

<sup>28</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Plattform "Ärzte für das Leben" v. Austria* (զանգատ թիվ 10126/82), դատավճիռը՝ 21-ը հունիսի, 1988 թ., պարբ. 32:

<sup>29</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում միավորման և հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 70 (a):

<sup>30</sup> Տե՛ս նաև ստորև՝ 52-րդ պարբերությունը:

ներառյալ դատական պաշտպանության միջոցները կամ մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցներին, ժամանակին հասանելի դարձնելու համար՝ նպատակ հետապնդելով երաշխավորել իրավունքն հավաքից առաջ, հավաքի ընթացքում և հավաքից հետո:

30. Լրագրողների, իրավապաշտպանների, ընտրադիտորդների և հավաքները մշտադիտարկող կամ դրանց վերաբերյալ զեկուցող այլ անձանց դերն առանձնակի կարևորություն ունի խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք իրականացման համար, և նրանք օգտվում են Դաշնագրով երաշխավորված պաշտպանությունից:<sup>31</sup> Նրանց կողմից այդ գործառույթների իրականացում չի կարող արգելվել կամ անհարկիորեն սահմանափակվել, այդ թվում՝ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների մշտադիտարկման մասով: Նրանք չպետք վրեժխնդրության կամ այլ ճնշումների և ոտնձգությունների հանդիպեն, և նրանց տեխնիկական միջոցները չպետք է առգրավվեն կամ վնասվեն:<sup>32</sup> Անգամ եթե հավաքն անօրինական է հայտարարվում կամ ցրվում, մշտադիտարկելու՝ մոնիթորինգի իրավունքը չի դադարում: Մարդու իրավունքների անկախ ազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների կողմից հավաքների մշտադիտարկումն համարվում է պատշաճ գործելակերպի դրսևորում:

31. Խաղաղ հավաքների իրավունքի իրականացման առաջնային պատասխանատվությունը կրում են Մասնակից պետությունները: Այնուամենայնիվ, մասնավոր ձեռնարկությունները նույնպես պարտավոր են հարգել մարդու իրավունքները՝ ներառյալ խաղաղ հավաքների իրավունքը, մասնավորապես՝ իրենց գործունեության ազդեցությունը կրող համայնքների և իրենց աշխատողների մասով:<sup>33</sup> Մասնավոր սուբյեկտներից և հասարակության լայն շրջանակներից կարելի է ակնկալել, որ նրանք պետք է ընդունելի համարեն նշված իրավունքի իրականացման պատճառով իրենց գործունեության բնականոն ընթացքի որոշ չափով խաթարումը:

32. Հաշվի առնելով, որ խաղաղ հավաքներն հաճախ արտահայտվելու գործառույթ ունեն, իսկ քաղաքական խոսքը որպես արտահայտվելու ձև օգտվում է առանձնահատուկ պաշտպանությունից, հետևաբար, քաղաքական ուղերձ պարունակող հավաքները պետք է ավելի շատ պաշտպանված լինեն, և դրանց անցկացումն հնարավոր դարձնելու համար պետք է ավելի շատ միջոցներ ձեռնարկվեն:<sup>34</sup>

33. Դաշնագրի 21-րդ հոդվածը և հարակից իրավունքները մասնակիցներին պաշտպանում են ոչ միայն հավաքի ընթացքում և հավաքի ժամանակ: Պաշտպանված է նաև հարակից գործունեությունը՝ անհատի կամ խմբի կողմից,

<sup>31</sup> *Zhagiparov v. Kazakhstan* (CCPR/C/124/D/2441/2014), պարբ. 13.2–13.5: Համեմատության համար տե՛ս Գլխավոր ասամբլեայի թիվ 53/1 բանաձևի հավելվածը:

<sup>32</sup> CCPR/C/MRT/CO/1, պարբ. 22: Տե՛ս նաև Գլխավոր ասամբլեայի թիվ 66/164 բանաձևը, OP 6:

<sup>33</sup> Բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ ուղեկառույցային սկզբունքները (Guiding Principles on Business and Human Rights), A/HRC/17/31, հավելվածը:

<sup>34</sup> Թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 34, 37–38 և 42–43: Տե՛ս նաև CCPR/C/LAO/CO/1, պարբ. 33:

որը կարող է դուրս լինել հավաքի անմիջական համատեքստից, սակայն Էական նշանակություն ունենալ խաղաղ հավաքի իրավունքի իրականացումն արդյունավետ դարձնելու համար: Մասնակից պետությունների պարտավորությունները, ուստի, տարածվում են նաև այնպիսի գործողությունների նկատմամբ, ինչպիսիք են մասնակիցների կամ կազմակերպիչների կողմից ռետուրսներ հայթայթելը, պլանավորելը, մոտալուտ միջոցառման մասին տեղեկություններ տարածելը,<sup>35</sup> միջոցառման համար նախապատրաստվելը կամ միջոցառման անցկացման վայր հասնելը,<sup>36</sup> մասնակիցների միջև հաղորդակցությունը նախքան հավաքը և հավաքի ընթացքում, հավաքի հեռարձակումը և հավաքի վայրից հեռարձակումը, և հավաքի ավարտից հետո հավաքի վայրից հեռանալը: Այդ գործողությունները կարող են սահմանափակվել նույն կերպ, ինչ՝ մասնակցությունը բուն հավաքին, սակայն այդ սահմանափակումները պետք է նեղ շրջանակ ունենան: Ավելին, ոչ ոք չպետք է ճնշվի կամ վրեժխնդրության բախվի խաղաղ հավաքին մասնակցելու կամ խաղաղ հավաքի հետ առնչություն ունենալու պատճառով:

34. Հավաքի հետ կապված բազմաթիվ գործողություններ տեղի են ունենում համացանցում կամ կատարվում են թվային ծառայությունների կիրառությամբ: Այդ գործողությունները նույնպես պաշտպանված են 21-րդ հոդվածով: Մասնակից պետությունները չպետք է, օրինակ, խաղաղ հավաքների կապակցությամբ արգելափակեն կամ խոչընդոտեն ինտերնետային կապը:<sup>37</sup> Նույնը վերաբերում է ըստ տեղորոշման թիրախավորվող կամ կոնկրետ տեխնոլոգիաներով կատարվող՝ կապի ծառայությունների կամ բովանդակային նյութի հասանելիության ծառայությունների սահմանափակումներին: Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի ինտերնետային ծառայություն մատուցողների և միջնորդների գործունեությունն անհարկիորեն չսահմանափակի հավաքները կամ հավաքի մասնակիցների անձնական կյանքը: Տեղեկատվության տարածման համակարգերի աշխատանքի ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի արտահայտվելու ազատության սահմանափակումների նկատմամբ կիրառելի չափորոշիչներին:<sup>38</sup>

35. Թեպետ պետության բոլոր մարմիններն են պարտավոր հարգել և ապահովել խաղաղ հավաքների իրավունքը, հավաքների վերաբերյալ որոշումներն հաճախ կայացվում են տեղական մակարդակում: Պետությունները, ուստի, պարտավոր են համարժեք վերապատրաստում և ռետուրսներ ապահովել այն պաշտոնատար անձանց համար, ովքեր մասնակցում են այդ որոշումների կայացմանը կառավարման ամենատարբեր օղակներում:

<sup>35</sup> *Tulzhenkova v. Belarus* (CCPR/C/103/D/1838/2008), պարբ. 9.3:

<sup>36</sup> *Evrezov and others v. Belarus* (CCPR/C/112/D/1999/2010 and Corr.1), պարբ. 8.5:

<sup>37</sup> CCPR/C/CMR/CO/5, պարբ. 41:

<sup>38</sup> Թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 34:

#### IV. Խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակումները

36. Թեպետ խաղաղ հավաքների իրավունքը որոշ դեպքերում կարող է սահմանափակվան ենթարկվել, ցանկացած սահմանափակումն հիմնավորելու պարտավորությունը՝ բեռը, կրում են պետական իշխանության մարմինները:<sup>39</sup> Պետական իշխանության մարմինները պետք է կարողանան հիմնավորել, որ ցանկացած սահմանափակում համապատասխանում է օրինականության պահանջին և միևնույն ժամանակ և՛ անհրաժեշտ է, և՛ համաչափ է 21-րդ հոդվածում թվարկված՝ սահմանափակման թույլատրելի հիմքերից առնվազն մեկին՝ հաշվի առնելով ստորև քննարկվող մանրամասները: Երբ այդ պարտավորությունը չի կատարվում, 21-րդ հոդվածն համարվում է խախտված:<sup>40</sup> Ցանկացած սահմանափակման կիրառությունն պետք է ուղղորդվի իրավունքի իրականացումն հնարավոր դարձնելու նպատակով, այլ ոչ՝ իրավունքի ոչ անհրաժեշտ և անհամաչափ սահմանափակումներ փնտրելու ձգտումով:<sup>41</sup> Սահմանափակումները չպետք է խտրական լինեն, խաթարեն իրավունքի բուն էությունը կամ ուղղված լինեն հավաքներին մասնակցությունն ապախրախուսելուն կամ կաշկանդելուն:

37. Կոնկրետ հավաքի արգելքը պետք է հնարավոր միջոցների մեջ վերջինը լինի: Երբ անհրաժեշտ է համարվում սահմանափակումներ կիրառել հավաքի նկատմամբ, իշխանությունները պետք է նախևառաջ ձգտեն կիրառել այն միջոցները, որոնք ավելի ցածր աստիճանի միջամտություն են առաջացնում: Պետությունները պետք է դիտարկեն այն տարբերակի նպատակահարմարությունը, նաև հավաքի անցկացումը թույլատրվում է, և դրանից հետո է միայն որոշվում, թե արդյոք պետք է միջոցներ ձեռնարկել միջոցառման ընթացքում տեղի ունեցած հնարավոր իրավախախտումների կապակցությամբ, բայց ոչ՝ նախապես և ի սկզբանե արգելքներ կիրառելով փորձել բացառել բոլոր ռիսկերը:<sup>42</sup>

38. Խաղաղ հավաքներին մասնակցության որևիցե սահմանափակում պետք է հիմնված լինի տվյալ հավաքի և տվյալ մասնակցի վարքագծի տարբերակված և անհատականացված գնահատման վրա: Խաղաղ հավաքների բլանկետային՝ համընդհանուր սահմանափակումները թերևս անհամաչափ են:

39. Դաշնագրի 21-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ նախատեսվում է, որ որևէ սահմանափակում չի կարող կիրառվել իրավունքի նկատմամբ՝ բացառությամբ օրենի համաձայն կիրառվող սահմանափակումների: Այդ կերպ ամրագրվում է *օրինականության* (անգլ.՝ «legality») ֆորմալ պահանջը, որը նման է Դաշնագրի այլ հոդվածներով ամրագրված՝ սահմանափակումների «օրենքով նախատեսված» (անգլ.՝ «provided by law») լինելու պահանջին: Ուստի, սահմանափակումները պետք է կիրառվեն օրենքով կամ օրենքի վրա հիմնված վարչական որոշմամբ: Համապատասխան օրենքները պետք է բավականաչափ

<sup>39</sup> *Gryb v. Belarus* (CCPR/C/108/D/1316/2004), պարբ. 13.4:

<sup>40</sup> *Chebotareva v. Russian Federation* (CCPR/C/104/D/1866/2009), պարբ. 9.3:

<sup>41</sup> *Turchenyak and others v. Belarus* (CCPR/C/108/D/1948/2010 and Corr.1), պարբ. 7.4:

<sup>42</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱԶԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 132, 220–22:

ճշգրիտ լինեն, որպեսզի հանրության անդամներին թույլ տան որոշել, թե ինչպես են նրանք կարգավորելու իրենց վարքագիծը: Դրանք չպետք է բացարձակ կամ համընդգրկուն հայեցողությամբ օժտեն դրանց կիրարկման համար պատասխանատու անձանց:<sup>43</sup>

40. Դաշնագրի 21-րդ հոդվածով նախատեսվում է, որ սահմանափակումները պետք է «անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում»: Ուստի, սահմանափակումները պետք է *անհրաժեշտ* և *համաչափ* լինեն ժողովրդավարության, իրավունքի գերիշխանության, քաղաքական բազմակարծության և մարդու իրավունքների վրա հիմնված հասարակության համատեքստում, և չլինեն զուտ ողջամիտ կամ նպատակահարմար:<sup>44</sup> Այդ սահմանափակումները պետք է պատշաճ արձագանքեն առկա հրատապ սոցիալական կարիքին, որն իր հերթին պետք է կապված լինի 21-րդ հոդվածում թվարկված թույլատրելի հիմքերի հետ: Սահմանափակումները պետք է պաշտպանության կոնկրետ գործառնություն ծառայող միջոցառումների շարքում լինեն նվազագույն միջամտություն առաջացնողը:<sup>45</sup> Ավելին, սահմանափակումները պետք է համաչափ լինեն, որի համար պահանջվում է արժեքային գնահատական տալ՝ իրականացվող իրավունքի նկատմամբ միջամտության բնույթը և իրավունքի վրա ունեցած բացասական ազդեցությունն համադրելով ստացվող օգուտին և միջամտելու համապատասխան հիմքին:<sup>46</sup> Եթե բացասական ազդեցությունն ավելի ծանրակշիռ է, քան՝ օգուտը, ապա սահմանափակումն անհամաչափ է, ուստի՝ թույլատրելի չէ:

41. Դաշնագրի 21-րդ հոդվածի երկրորդ նախադասության վերջին մասով նախատեսվում են խաղաղ հավաքների իրավունքը սահմանափակելու իրավաչափ հիմքերը: Դա սպառնիչ ցանկ է, որը բաղկացած է հետևյալ հիմքերից. ազգային անվտանգության շահերը, հանրային անվտանգությունը, հանրային կարգը («*ordre public*»), հանրային առողջության կամ բարոյականության պաշտպանությունը կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

42. «Ազգային անվտանգության շահերը» կարող են սահմանափակման համար հիմք ծառայել, եթե այդ սահմանափակումներն անհրաժեշտ են ազգի գոյությունը, տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական անկախությունն ուժի գործադրումից կամ գործադրման իրական սպառնալիքից պաշտպանելու՝ պետության կարողությունը պահպանելու համար:<sup>47</sup> «Խաղաղ» հավաքները միայն բացառիկ դեպքերում են հաղթահարում այդ նվազագույն շեմը: Ավելին, այն դեպքում, երբ ազգային անվտանգության վատթարացման բուն պատճառը

<sup>43</sup> *Nepomnyashchiy v. Russian Federation* (CCPR/C/123/D/2318/2013), պարբ. 7.7, ինչպես նաև թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 25:

<sup>44</sup> Թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 34:

<sup>45</sup> *Toregozhina v. Kazakhstan* (CCPR/C/112/D/2137/2012), պարբ. 7.4:

<sup>46</sup> Նույն տեղում, պարբ. 7.4, 7.6: Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 131:

<sup>47</sup> Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթների սահմանափակման և դրանցից շեղվելու մասին Սիրակուզայի սկզբունքները (*Siracusa Principles on the Limitation and Derogation of Provisions in the International Covenant on Civil and Political Rights*) (E/CN.4/1985/4, հավելված), պարբ. 29:

ճնշումներն են մարդու իրավունքների նկատմամբ, դա չի կարող հիմք դառնալ այլ սահմանափակումներ կիրառելու, այդ թվում՝ խաղաղ հավաքների իրավունքը սահմանափակելու համար:<sup>48</sup>

43. Որպեսզի «հանրային անվտանգության» պաշտպանությունը որպես հիմք մեջբերվի խաղաղ հավաքների իրավունքը սահմանափակելու համար,<sup>49</sup> պետք է հիմնավորված լինի, որ հավաքն իրական և էական ռիսկ է ստեղծում անձանց անվտանգության (անձի կյանքի կամ անվտանգության) համար, կամ՝ գույքին էական վնաս պատճառելու նույնանման ռիսկ է ստեղծում:<sup>50</sup>

44. «Հանրային կարգը» վերաբերում է այն կանոնների ամբողջությանը, որոնք ապահովում են հասարակության պատշաճ կենսագործունեությունը, կամ՝ այն հիմնարար սկզբունքների ամբողջությունը, որոնց վրա հիմնված է հասարակությունը, որոնց թվում է նաև հարգանքն առ մարդու իրավունքները՝ ներառյալ խաղաղ հավաքների իրավունքը:<sup>51</sup> Մասնակից պետությունները չպետք է «հանրային կարգ» հասկացության աղոտ սահմանմամբ հիմնավորեն խաղաղ հավաքների իրավունքի չափազանց ընդգրկուն սահմանափակումները:<sup>52</sup> Խաղաղ հավաքները որոշ դեպքերում կարող են սկզբունքորեն կամ դիտավորյալ խաթարել կյանքի բնականոն ընթացքը, ուստի՝ դրանց նկատմամբ պետք է հանդուրժողության շատ բարձր աստիճան դրսևորել: «Հանրային կարգը» և «օրինականությունը և կարգուկանոնը» հոմանիշներ չեն, և «հանրային անկարգության»՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված արգելքը չպետք է կիրառել խաղաղ հավաքներն անհարկիորեն սահմանափակելու նպատակով:

45. «Հանրային առողջությունը պաշտպանելու» հիմքով սահմանափակումները կարող են թույլատրելի լինել բացառիկ դեպքերում, օրինակ՝ երբ վարակիչ հիվանդության բռնկում կա, և հավաքները վտանգավոր են: Ծայրահեղ դեպքերում դա կարող է կիրառելի լինել նաև այն ժամանակ, երբ հավաքի սանիտարական վիճակն առողջական լուրջ ռիսկ է ստեղծում լայն հասարակայնության կամ հենց հավաքի մասնակիցների համար:<sup>53</sup>

46. Խաղաղ հավաքների սահմանափակումները պետք է միայն բացառիկ դեպքերում կիրառվեն «բարոյականությունը պաշտպանելու» հիմքով: Այս հիմքը կիրառելու դեպքում այն չպետք է ուղղված լինի բարոյականության մասին այն պատկերացումները պաշտպանելուն, որոնք բացառապես բխում են սոցիալական, փիլիսոփայական կամ կրոնական մեկ աշխարհայացքից:<sup>54</sup> Նման սահմանափակումները ցանկացած պարագայում պետք է դիտարկել մարդու իրավունքների համընդհանուր բնույթի, բազմակարծության և խտրականության

<sup>48</sup> Նույն տեղում, պարբ. 32:

<sup>49</sup> Տե՛ս CCPR/C/MKD/CO/3, պարբ. 19, *Alekseev v. Russian Federation*, պարբ. 9.5:

<sup>50</sup> Սիրակուզայի սկզբունքները, պարբ. 33:

<sup>51</sup> Նույն տեղում, պարբ. 22:

<sup>52</sup> CCPR/C/KAZ/CO/1, պարբ. 26; CCPR/C/DZA/CO/4, պարբ. 45:

<sup>53</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Cisse v. France* (գանգատ թիվ 51346/99), դատավճիռը՝ 9-ը ապրիլի, 2002 թ.:

<sup>54</sup> Թիվ 22 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 8:

արգելքի լույսի ներքո:<sup>55</sup> Այս հիմքով կիրառվող սահմանափակումները չպետք է կիրառվեն, օրինակ, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության արտահայտմանը դեմ լինելու պատճառով:<sup>56</sup>

47. «Այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության» նպատակով կիրառվող սահմանափակումները կարող են կապված լինել հավաքին մասնակցող անձանց՝ Դաշնագրով սահմանված իրավունքների կամ մարդու այլ իրավունքների պաշտպանության հետ: Միևնույն ժամանակ, հավաքների ընթացքում իրավաչափորեն օգտագործվում են հանրային և այլ տարածքները, և քանի որ դրանց բուն բնույթը ենթադրում է բնականոն կյանքի որոշ աստիճանի խաթարում, պետք է հարմարվել այդ խաթարմանը, բացառությամբ երբ վերջինս անհամաչափ բեռ է առաջացնում, որի դեպքում պետական իշխանության մարմինները պարտավոր են մանրակրկիտ հիմնավորում ներկայացնել իրենց կողմից կիրառվող ցանկացած սահմանափակման համար:<sup>57</sup>

48. Դաշնագրի 21-րդ հոդվածում նախատեսված սահմանափակումների վերևում քննարկված ընդհանուր շրջանակից զատ, գոյություն ունեն խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակումներին առնչվող մի շարք այլ գործոններ: Իրավունքի իրականացմանն առնչվող հիմնական գործոնն այն պահանջն է, որ սահմանափակումները սկզբունքորեն պետք է որևէ կերպ չազդեն բովանդակության վրա, ուստի՝ չպետք է առնչություն ունենան հավաքի միջոցով փոխանցվող ուղերձի բովանդակության հետ:<sup>58</sup> Հակառակ գործելակերպը կիմաստագրվեր խաղաղ հավաքների բուն նպատակը, քանի որ հավաքը՝ որպես քաղաքական և սոցիալական մասնակցության գործիք, մարդկանց թույլ է տալիս առաջ մղել իրենց գաղափարները և պարզել, թե որքան օժանդակություն են դրանք վայելում:

49. Հավաքի շրջանակում տեղի ունեցող՝ արտահայտվելու դրսևորումների հետ գործ ունենալիս պետք է հետևել արտահայտվելու ազատության նկատմամբ կիրառելի կանոններին: Ուստի, խաղաղ հավաքների սահմանափակումները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործվեն՝ ճնշելու համար կառավարության դեմ ուղղվող քաղաքական ընդդիմության արտահայտությունը կամ իշխանության հետ անհամաձայնությունը,<sup>59</sup> ներառյալ՝ ժողովրդավարական ճանապարհով իշխանափոխության հասնելու, սահմանադրությունը կամ քաղաքական համակարգը փոխելու կոչերը կամ ինքնորոշման նպատակով ձեռնարկվող քայլերը: Դրանք չպետք է օգտագործվեն պետության պաշտոնատար

<sup>55</sup> Թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 32:

<sup>56</sup> *Fedotova v. Russian Federation* (CCPR/C/106/D/1932/2010), պարբ. 10.5–10.6, *Alekseev v. Russian Federation*, պարբ. 9.6:

<sup>57</sup> *Stambrovsky v. Belarus* (CCPR/C/112/D/1987/2010), պարբ. 7.6, *Pugach v. Belarus* (CCPR/C/114/D/1984/2010), պարբ. 7.8:

<sup>58</sup> *Alekseev v. Russian Federation*, պարբ. 9.6:

<sup>59</sup> CCPR/C/MDG/CO/4, պարբ. 51:

անձանց կամ պետական մարմիններին պատվին և հեղինակությանն ուղղված վիրավորանքներն արգելելու նպատակով:<sup>60</sup>

50. Դաշնագրի 20-րդ հոդվածի համաձայն՝ խաղաղ հավաքները չեն կարող օգտագործվել պատերազմի քարոզի համար (1-ին մաս) կամ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության այնպիսի ջատագովության համար, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության է դրդում (2-րդ մաս):<sup>61</sup> Նման դեպքերում ձեռնարկող քայլերը պետք է հնարավորինս վերաբերեն կոնկրետ գործողություններ կատարող անհատներին, այլ ոչ՝ ամբողջ հավաքին: Եթե հավաքի գերակա ուղերձը տեղավորվում է 20-րդ հոդվածի շրջանակի մեջ, ապա մասնակցությունն այդ հավաքին պետք է դիտարկել 19-րդ և 21-րդ հոդվածներով նախատեսված՝ սահմանափակման նկատմամբ կիրառելի պահանջներին համապատասխան:<sup>62</sup>

51. Դրոշների, համազգեստի, նշանների և պաստառների օգտագործումն ընդհանուր առմամբ պետք է համարել արտահայտվելու իրավաչափ ձև, որը չպետք է սահմանափակել, անգամ եթե այդ խորհրդանիշները հիշեցնում են ցավալի անցյալի մասին: Բացառիկ դեպքերում, երբ այդ խորհրդանիշներն ուղղակիորեն և մեծ մասամբ ասոցացվում են խտրականության, թշնամանքի կամ բռնության սերմանման հետ, պետք է կիրառելի լինեն պատշաճ սահմանափակումներ:<sup>63</sup>

52. Այն փաստը, որ հավաքն հանրության անդամների կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ ուղղված թշնամական ռեակցիա է առաջացնում կամ կարող է առաջացնել, որպես ընդհանուր կանոն՝ չի կարող սահմանափակման արդարացում լինել. պետք է թույլատրել, որպեսզի հավաքը տեղի ունենա, իսկ մասնակիցներին պետք է պաշտպանել:<sup>64</sup> Այնուամենայնիվ, այն բացառիկ դեպքում, երբ պետությունն ակնհայտորեն անկարող է մասնակիցներին պաշտպանել անվտանգության լուրջ սպառնալիքից, սահմանափակումներ կարող են կիրառվել հավաքին մասնակցության նկատմամբ: Նման սահմանափակումները պետք է համապատասխանեն խիստ չափանիշների: Բավարար հիմնավորում չի կարող լինել բռնության ոչ կոնկրետ և չհստակեցված ռիսկը, կամ՝ զուտ այն հնարավորությունը մատնանշելը, թե իշխանությունները միգուցե ի գորու չեն լինի կանխելու կամ չեզոքացնելու հավաքին դեմ դուրս եկող անձանց կողմից հնարավոր բռնությունը: Պետությունը պետք է կարողանա կոնկրետ ռիսկի գնահատման հիման վրա ցույց տալ, որ ի գորու չի լինի զսպել իրավիճակը, անգամ եթե

<sup>60</sup> CCPR/C/79/Add. 86, պարբ. 18, թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 38:

<sup>61</sup> Հոդված 20 (1) և (2):

<sup>62</sup> Տե՛ս թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 50–52, ինչպես նաև Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածը, ինչպես նաև Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի թիվ 35 ընդհանուր մեկնաբանությունը: Տե՛ս նաև Ռաբատի գործողությունների ծրագիրը (2012 թ.), A/HRC/22/17/Add.4, հավելվածը, պարբ. 29, ինչպես նաև Բեյրութի հռչակագիրը և «Հավատն հանուն իրավունքների» խորագրով ընդունված 18 հանձնառությունները (A/HRC/40/58, հավելվածներ I և II):

<sup>63</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 152: Տե՛ս նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Fáber v. Hungary* (զանգատ թիվ 40721/08), դատավճիռը՝ 24-ը հոկտեմբերի, 2012 թ., պարբ. 56–58:

<sup>64</sup> *Alekseev v. Russian Federation*, պարբ. 9.6: Տե՛ս նաև վերևում՝ 18-րդ պարբերությունը:



տեղակայվեն մեծ ծավալի իրավապահ ռեսուրսներ:<sup>65</sup> Նախքան արգելք կիրառելը՝ պետք է դիտարկել նվազ միջամտություն առաջացնող սահմանափակումների հնարավորությունը, օրինակ՝ հավաքի հետաձգումը կամ այլ վայր տեղափոխելը:

53. «Հավաքի ժամանակը, վայրը և անցկացման ձևը» կանոնակարգելը որպես կանոն որևէ կերպ չի ազդում բովանդակության վրա, և թեպետ այդ բաղադրիչները կարգավորող որոշ սահմանափակումներ կարող են թույլատրելի լինել, միևնույն է, պետական իշխանության մարմիններն են պարտավոր յուրաքանչյուր դեպքում առանձին հիմնավորել նման սահմանափակումները:<sup>66</sup> Ցանկացած այդպիսի սահմանափակում պետք է, միևնույն է, հնարավորինս թույլ տա մասնակիցներին հավաքվել իրենց թիրախային լսարանի «տեսադաշտում և լսադաշտում» կամ ցանկացած այնպիսի վայրում, որը կարևոր նշանակություն ունի այդ նպատակին հասնելուն համար:<sup>67</sup>

54. Ինչ վերաբերում է հավաքների *ժամանակը* սահմանափակելուն, ապա մասնակիցները բավարար հնարավորություն ունենան՝ արդյունավետորեն արտահայտելու համար իրենց տեսակետները կամ հետամուտ լինելու իրենց այլ նպատակներին:<sup>68</sup> Ընդհանուր առմամբ պետք է թողնել, որպեսզի խաղաղ հավաքներն ինքնաբերաբար ավարտվեն: Հավաքի թույլատրված կամ չթույլատրված օրվա կամ ամսաթվի ճշգրիտ ժամի սահմանափակումները մտահոգությունների տեղիք են տալիս՝ կապված Դաշնագրի պահանջների կատարման հետ:<sup>69</sup> Հավաքները չպետք է սահմանափակել բացառապես դրանց հաճախականության պատճառով: Ցույցի ժամը, տևողությունը կամ հաճախականությունը, օրինակ, կարող են առանցքային դերակատարում ունենալ ցույցի նպատակին հասնելու հարցում: Այնուամենայնիվ, տևական ժամանակ շարունակվող հավաքների հանրագումարային ազդեցությունը կարելի է հաշվի առնել սահմանափակման համաչափությունը գնահատելիս: Օրինակ, բնակելի թաղամասերում պարբերաբար գիշերային ժամերին անցկացվող որոշ հավաքներ կարող են լուրջ ազդեցություն ունենալ մոտակայքի բնակիչների վրա:

55. Ինչ վերաբերում է հավաքների *անցկացման վայրը* սահմանափակելուն, ապա խաղաղ հավաքները սկզբունքորեն կարող են անցկացվել ցանկացած տարածքում, որն հասանելի է կամ պիտի հասանելի լինի հանրությանը, մասնավորապես, օրինակ, հանրային հրապարակներում և փողոցներում:<sup>70</sup> Թեպետ որոշ տարածքների, օրինակ՝ շինությունների և այգիների հանրային մատչելիության վերաբերյալ կանոնները նույնպես կարող են սահմանափակել այդ վայրերում հավաքվելու իրավունքը, խաղաղ հավաքների նկատմամբ նման

<sup>65</sup> *Alekseev v. Russian Federation*, պարբ. 9.6:

<sup>66</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 132:

<sup>67</sup> *Turchenyak et al. v. Belarus*, պարբ. 7.4:

<sup>68</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Éva Molnár v. Hungary* (գանգատ թիվ 10346/05), դատավճիռը՝ 7-ը հոկտեմբերի, 2008 թ., պարբ. 42:

<sup>69</sup> CCPR/C/KOR/CO/4, պարբ. 52, CCPR/C/TJK/CO/3, պարբ. 49:

<sup>70</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողով, *Բոնոդըր և մարդու իրավունքները*, պարբ. 72:

սահմանափակումների կիրառությունը պետք է հիմնավորել լինի 21-րդ հոդվածի ներքո: Խաղաղ հավաքները չպետք է տեղափոխել հեռավոր վայրեր, որտեղ դրանք չեն կարող արդյունավետորեն գրավել հավաքի հասցեատերերի կամ հանրության լայն շրջանակների ուշադրությունը:<sup>71</sup> Ընդհանուր կանոնի համաձայն՝ չեն կարող կիրառվել արգելքներ մայրաքաղաքի ցանկացած վայրում գումարվող բոլոր հավաքների նկատմամբ,<sup>72</sup> ցանկացած հանրային վայրում բացառությամբ կոնկրետ մատնանշված մեկ վայրի, կոնկրետ քաղաքում<sup>73</sup> կամ քաղաքի կենտրոնից դուրս<sup>74</sup> կամ «տվյալ քաղաքի բոլոր փողոցներում»:

56. Դատարանների, խորհրդարանների, պատմական նշանակություն ունեցող վայրերի կամ պաշտոնական այլ շինությունների և համանման այլ վայրերի սահմանագծերը որպես հավաքի անցկացման համար չթույլատրված վայր ճանաչելն ընդհանուր առմամբ ցանկալի չէ և դրանից պետք է խուսափել, ի թիվս այլոց՝ նաև այն պատճառով, որ դրանք հանրային վայրեր են: Այնքանով, որքանով այդ վայրերում և դրանց մերձակայքում հավաքները սահմանափակվում են, սահմանափակումը պետք է հստակորեն հիմնավորված լինի և ունենա նեղ շրջանակ:<sup>75</sup>

57. Թեպետ մասնավոր տարածքներում անցկացվող հավաքները տեղավորվում են խաղաղ հավաքների իրավունքի շրջանակի մեջ,<sup>76</sup> գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերը նույնպես պետք է հավուր պատշաճի հաշվի առնել: Այն հարցը, թե որքանով կարող են սահմանափակումներ կիրառվել նման հավաքի նկատմամբ, կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են տարածքի՝ հանրության համար սովորաբար հասանելի լինելը, գույքի նկատմամբ իրավունքների նկատմամբ հավաքի առաջացրած հնարավոր միջամտության բնույթը և չափը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձանց համաձայնությունը տարածքն հավաքի համար օգտագործելուն, տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի՝ հավաքի շրջանակում վիճարկվելու փաստը, և թե արդյոք մասնակիցները կարող են ողջամիտ այլ միջոցներով հասնել հավաքի հետապնդած նպատակին՝ պահպանելով հավաքը «տեսադաշտում և լսադաշտում» անցկացնելու սկզբունքը:<sup>77</sup> Մասնավոր գույքի հասանելիությունը չի կարող խտրական հիմքով արգելվել:

58. Ինչ վերաբերում է խաղաղ հավաքներն անցկացնելու եղանակի և ձևի սահմանափակումներին, ապա մասնակիցներին պետք է թույլ տալ, որպեսզի նրանք որոշում կայացնեն իրենց ուղերձն հաղորդելու նպատակով պաստառներ կամ բարձրախոսներ կամ երաժշտական գործիքներ կամ տեխնիկական այլ միջոցներ

<sup>71</sup> CCPR/C/KOR/CO/4, պարբ. 52, CCPR/C/KAZ/CO/1, պարբ. 26:

<sup>72</sup> CCPR/C/DZA/CO/4, պարբ. 45:

<sup>73</sup> *Turchenyak et al. v. Belarus*, պարբ. 7.5:

<sup>74</sup> *Sudalenko v. Belarus* (CCPR/C/113/D/1992/2010), պարբ. 8.5:

<sup>75</sup> *Zündel v. Canada* (CCPR/C/78/D/953/2000), պարբ. 8.5:

<sup>76</sup> Համեմատության համար տե՛ս *Giménez v. Paraguay* (CCPR/C/123/D/2372/2014), պարբ. 8.3, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Annenkov and others v. Russia* (զանգատ թիվ 31475/10), դատավճիռը՝ 25-ը հոկտեմբերի, 2017 թ., պարբ. 122:

<sup>77</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Appleby and others v. United Kingdom* (զանգատ թիվ 44306/98), դատավճիռը՝ 6-ը մայիսի, 2003 թ., պարբ. 47:

(օրինակ՝ պրոյեկտորային սարքավորումներ) օգտագործելու մասին: Հավաքի շրջանակում կարող են ժամանակավոր կառույցներ կանգնեցվել, օրինակ՝ ճայնային համակարգեր, որպեսզի հավաքն ավելի լսելի լինի լսարանին կամ այլ առումով հասնի իր առջև դրված նպատակին:<sup>78</sup>

59. Մասնակից պետություններն ընդհանուր առմամբ չպետք է սահմանափակեն հավաքի մասնակիցների թիվը:<sup>79</sup> Ցանկացած նման սահմանափակում կարող է ընդունելի լինել միայն այն դեպքում, երբ հստակ կապ գոյություն ունի սահմանափակման՝ 21-րդ հոդվածով նախատեսված իրավաչափ հիմքի հետ, օրինակ՝ երբ հանրային անվտանգության նկատառումներից ելնելով՝ ստադիոնում կամ կամուրջի վրա հավաքվող ամբոխի մեծությունը չպետք է գերազանցի որոշակի թիվը, կամ երբ հանրային առողջության նկատառումներից ելնելով անհրաժեշտ է ֆիզիկական որոշակի հեռավորություն պահպանել:

60. Դեմքը ծածկող պարագաներ կամ քողարկման այլ միջոցներ, օրինակ՝ գլխարկներ կամ դիմակներ կրելն հավաքի մասնակիցների կողմից կամ հավաքին անանուն մասնակցելու ուղղությամբ այլ քայլեր ձեռնարկելը կարող է խաղաղ հավաքի շրջանակում արտահայտվելու իրավունքի բաղադրիչ լինել, նպաստել վրեժխնդրությունը կանխելուն կամ անձնական կյանքը պաշտպանելուն, այդ թվում՝ վերահսկողական նոր տեխնոլոգիաների համատեքստում: Մասնակիցների անանունությունը պետք է թույլատրել, բացառությամբ երբ նրանց վարքագիծը ողջամիտ հիմքեր է ստեղծում ձերբակալելու համար<sup>80</sup> կամ գոյություն ունեն նմանաբնույթ այլ ծանրակշիռ պատճառներ:<sup>81</sup> Քողարկման միջոցների կիրառությունն ինքնին չպետք է համարվի բռնության մտադրության վկայություն:

61. Թեպետ վերաբերելի տեղեկությունների և տվյալների հավաքագրումը պետական իշխանության մարմինների կողմից որոշ հանգամանքներում կարող է օգնել հավաքի կազմակերպմանն աջակցելու գործառույթի իրականացմանը, դա չպետք է հանգեցնի իրավունքների նկատմամբ ճնշումների կամ կաշկանդի իրավունքների իրականացումը: Որևիցե տեղեկատվության հավաքագրում՝ պետական կամ մասնավոր սուբյեկտների կողմից, այդ թվում՝ վերահսկողության կամ կապին միջամտելու եղանակով, ինչպես նաև՝ տվյալների հավաքագրման, փոխանակման, պահպանման և օգտագործման ձևը պետք է խստագույնս համապատասխանեն կիրառելի միջազգային չափանիշներին, այդ թվում՝ անձնական կյանքի իրավունքի մասով, և երբևէ չպետք է նպատակաուղղված լինեն հավաքների մասնակիցներին կամ հնարավոր մասնակիցներին ահաբեկելուն կան ճնշելուն:<sup>82</sup> Նման գործելակերպը պետք է կարգավորվի պատշաճ և հանրությանն

<sup>78</sup> Տե՛ս *Frumkin v. Russia*, պարբ. 107:

<sup>79</sup> CCPR/C/THA/CO/2, պարբ. 39:

<sup>80</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 153, ինչպես նաև Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում միավորման և հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 81:

<sup>81</sup> Դեմքը խորհրդանշանական կերպով ծածկելու մասին տե՛ս վերևում՝ 51-րդ պարբերությունը:

<sup>82</sup> A/HRC/31/66, պարբ. 73:

հասանելի ներպետական իրավական դաշտով, որը պետք է համահունչ լինի միջազգային չափանիշներին և վերահսկվի դատարանների կողմից:<sup>83</sup>

62. Լոկ այն փաստը, որ կոնկրետ հավաքը տեղի է ունենում հանրային վայրում, դեռ չի նշանակում, որ մասնակիցների անձնական կյանքը չի կարող խախտվել: Անձնական կյանքի իրավունքը կարող է խախտվել, օրինակ, եթե կիրառվում են դեմքի ճանաչման և այլ տեխնոլոգիաներ, որոնցով կարելի է ամբոխի մեջ պարզել կամ ճանաչել առանձին մասնակիցների ինքնությունը:<sup>84</sup> Նույնը վերաբերում է նաև խաղաղ հավաքների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու նպատակով սոցիալական ցանցերի մոնիթորինգին: Անկախ և թափանցիկ հսկողություն և վերահսկողություն պետք է իրականացնել խաղաղ հավաքների մասնակիցների անձնական տեղեկությունները և տվյալներն հավաքագրելու որոշման նկատմամբ, ինչպես նաև՝ այդ տեղեկությունները և տվյալները փոխանակելու կամ պահպանելու նկատմամբ, որպեսզի ապահովվի այդ գործունեության համապատասխանությունը Դաշնագրին:

63. Խաղաղ հավաքներին մասնակցելու՝ պետական պաշտոնատար անձանց ազատությունը չպետք է սահմանափակել ավելի, քան դա խստագույնս անհրաժեշտ է նրանց անկողմնակալության նկատմամբ հանրության վստահությունն ապահովելու, և այդ կերպ՝ իրենց պաշտոնական պարտականությունների կատարումն հնարավոր դարձնելու համար,<sup>85</sup> ընդ որում՝ նման բոլոր սահմանափակումները պետք է համահունչ լինեն 21 հոդվածին:

64. Ոստիկանության կամ անվտանգության ծառայությունների,<sup>86</sup> բուժօգնության կամ մաքրման ծառայությունների<sup>87</sup> կամ խաղաղ հավաքների հետ կապված հանրային այլ ծառայությունների ծառայությունների ծախսերը կրելու կամ այդ ծառայություններ կազմակերպելու պահանջը մասնակիցներին կամ կազմակերպիչներին ներկայացնելն ընդհանուր առմամբ համահունչ չէ 21 հոդվածին:<sup>88</sup>

65. Կազմակերպիչները և մասնակիցները պարտավոր են կատարել հավաքի նկատմամբ գործող իրավական պահանջները: Նրանք կարող են պատասխանատվության ենթարկվել իրենց անօրինական վարքագծի, այդ թվում՝ այլ անձանց անօրինական վարքագիծը դրդելու համար:<sup>89</sup> Եթե բացառիկ հանգամանքներում կազմակերպիչները պատասխանատվության են ենթարկվում այն վնասի կամ վնասվածքներ համար, որի ուղղակի պատասխանատուն իրենք չեն եղել, ապա դա պետք է սահմանափակվել միայն այն դեպքերով, որոնցում

<sup>83</sup> CCPR/C/KOR/CO/4, պարբ. 42–43:

<sup>84</sup> Համեմատության համար տե՛ս A/HRC/44/24, պարբ. 33–34:

<sup>85</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 110:

<sup>86</sup> CCPR/C/CHE/CO/4, պարբ. 48:

<sup>87</sup> *Poliakov v. Belarus* (CCPR/C/111/D/2030/2011), պարբ. 8.2–8.3, CCPR/C/BLR/CO/5, պարբ. 51 (a):

<sup>88</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում միավորման և հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 102 (b):

<sup>89</sup> A/HRC/31/66, պարբ. 26:

ապացույցները վկայում են, որ նրանք ողամտորեն կարող էին կանխատեսել և կանխել դա:<sup>90</sup> Լավագույն պրակտիկան այն է, երբ կազմակերպիչներն անհրաժեշտության դեպքում նշանակում են օգնականների կամ հսկիչների, բայց դա չպետք է իրավական պահանջ լինի:

66. Պետական իշխանությունները չեն կարող ապագայում հավաքներ չկազմակերպելու կամ հավաքներին չմասնակցելու խոստում կամ հանձնառություն պահանջել անհատներից:<sup>91</sup> Եվ հակառակը, ոչ մեկին չի կարելի հարկադրել, որպեսզի նա հավաքի մասնակցի:<sup>92</sup>

67. Եթե խաղաղ հավաքների կազմակերպիչների կամ մասնակիցների նկատմամբ քրեական կամ վարչական պատիժներ են կիրառվում անօրինական վարքագծի համար, այդ պատժամիջոցները պետք է իրենց բնույթով համաչափ և ոչ խտրական լինեն և չպետք է հիմնված լինեն անորոշ կամ չափազանց լայն շրջանակով սահմանված իրավախախտումների վրա կամ արգելեն այնպիսի գործողություններ, որոնք պաշտպանված են Դաշնագրով:

68. Թեպետ ահաբեկչական գործողությունները պետք է քրեակացված լինեն միջազգային իրավունքին համապատասխան, այդ հանցագործությունների սահմանումը չպետք է չափազանց ընդհանրական կամ խտրական լինի, և չպետք է կիրառվի այնպես, որպեսզի արգելափակի կամ ապախրախուսի խաղաղ հավաքների իրավունքի իրականացումը:<sup>93</sup> Խաղաղ հավաք կազմակերպելու կամ խաղաղ հավաքին մասնակցելու գործողությունը ինքնին չի կարող քրեականացվել ահաբեկչության դեմ պայքարի օրենքներով:

69. Սահմանափակումների և արգելքների դեպքում իրավական պաշտպանությունն ստանալու նպատակով դատարաններ կամ դատական այլ մարմիններ դիմելու հնարավորությունը պետք է անմիջականորեն երաշխավորված և հասանելի լինի՝ ներառյալ վերաքննության դիմելու կամ բողոքարկելու իրավունքը: Հավաքների նկատմամբ կիրառված սահմանափակումների և արգելքների դեմ հարուցվող նման վարույթների յուրաժամությունը և տևողությունը չպետք է խաթարեն տվյալ իրավունքի իրականացումը:<sup>94</sup> Դաշնագրով սահմանված ընթացակարգային երաշխիքները կիրառելի են բոլոր այդպիսի դեպքերի նկատմամբ, ինչպես նաև այնպիսի խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են խաղաղ հավաքների կապակցությամբ անձին կամ անձանց ազատությունից զրկելը կամ պատժամիջոցներ՝ ներառյալ տուգանքներ կիրառելը:<sup>95</sup>

<sup>90</sup> Համեմատության համար տե՛ս ԵԱՀԿ և Վենետիկի հանձնաժողով, *Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 224:

<sup>91</sup> CCPR/C/KHM/CO/2, պարբ. 22, CCPR/C/JOR/CO/5, պարբ. 32:

<sup>92</sup> CCPR/C/TKM/CO/2, պարբ. 44:

<sup>93</sup> CCPR/C/SWZ/CO/1, պարբ. 36, CCPR/C/BHR/CO/1, պարբ. 29: Տե՛ս նաև A/HRC/40/52:

<sup>94</sup> CCPR/C/POL/CO/6, պարբ. 23:

<sup>95</sup> *E. V. v. Belarus* (CCPR/C/112/D/1989/2010), պարբ. 6.6:

## V. Տեղեկացման ռեժիմները

70. Թույլտվության համար պետական իշխանության մարմիններին դիմելու պարտավորությունը խաթարում է այն սկզբունքը, որի համաձայն խաղաղ հավաքների իրավունքը հիմնական իրավունք է:<sup>96</sup> Տեղեկացման համակարգերը՝ ներառյալ այն պահանջը, որի համաձայն խաղաղ հավաքներ կազմակերպելու մտադրություն ունեցող անձինք պարտավոր են պետական իշխանությունների մարմիններին նախապես տեղեկացնել և տրամադրել էական մանրամասներ, թույլատրելի են այնքանով, որքանով դա իշխանություններին կօգնի, որպեսզի վերջիններս ապահովեն խաղաղ հավաքների սահուն անցկացումը և պաշտպանեն այլոց իրավունքները:<sup>97</sup> Միևնույն ժամանակ, այդ պահանջը չպետք է չարաշահել խաղաղ հավաքները խոչընդոտելու նպատակով, և ինչպես իրավունքի նկատմամբ այլ միջամտությունները, պետք է հիմնավորված լինի 21-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:<sup>98</sup> Տեղեկացման պահանջների կիրարկումը չպետք է ինքնանպատակ դառնա:<sup>99</sup> Տեղեկացման ընթացակարգերը պետք է թափանցիկ լինեն, այլ ոչ՝ անհարկորեն բյուրոկրատական:<sup>100</sup> Տեղեկացման ընթացակարգերի շրջանակում կազմակերպիչներին ներկայացվող պահանջները պետք է համաչափ լինեն տվյալ հավաքի՝ հանրության նկատմամբ հնարավոր ազդեցությանը: Տեղեկացման ընթացակարգերը պետք է անվճար լինեն:

71. Մոտավուտ հավաքի մասին պետական իշխանության մարմիններին չտեղեկացնելն այն դեպքում, երբ տեղեկացումն անհրաժեշտ է, չի նշանակում, որ մասնակցությունն հավաքին կդառնա անօրինական, և չտեղեկացնելն ինքնին չպետք է հիմք դառնա հավաքը ցրելու կամ մասնակիցներին կամ կազմակերպիչներին ձերբակալելու համար կամ անհարկի պատժամիջոցներ կիրառելու, օրինակ՝ նրանց քրեական հանցագործությունների մեջ մեղադրելու համար: Երբ չտեղեկացնելու համար կազմակերպիչների նկատմամբ կիրառվում են վարչական պատիժներ, իշխանությունները պարտավոր են դա հիմնավորել:<sup>101</sup> Չտեղեկացնելն իշխանություններին չի ազատում իրենց ուժերի սահմաններում հավաքի անցկացմանն օժանդակելու և հավաքի մասնակիցներին պաշտպանելու պարտավորությունից:

72. Նախապես պլանավորված հավաքների մասին տեղեկացնելու պահանջները պետք է նախատեսված լինեն ներպետական օրենսդրությամբ: Նախապես տեղեկացնելու նվազագույն ժամկետը կարող է տարբերվել՝ կախված իրավիճակային համատեքստից և աջակցման համար անհրաժեշտ ջանքերից,

<sup>96</sup> CCPR/C/MAR/CO/6, պարբ. 45, CCPR/C/GMB/CO/2, պարբ. 41, ինչպես նաև Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում միավորման և հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 71:

<sup>97</sup> *Kivenmaa v. Finland*, պարբ. 9.2: Տե՛ս նաև Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում միավորման և հավաքների ազատության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 72:

<sup>98</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև *Sekerko v. Belarus*, պարբ. 9.4:

<sup>99</sup> *Popova v. Russian Federation*, պարբ. 7.5:

<sup>100</sup> *Poliakov v. Belarus*, պարբ. 8.3:

<sup>101</sup> Տե՛ս, օրինակ, *Popova v. Russian Federation*, պարբ. 7.4, 7.5: Տե՛ս նաև A/HRC/31/66, պարբ. 23:

սակայն չպետք է չափազանց երկար լինի:<sup>102</sup> Եթե սահմանափակումները կիրառվում են տեղեկացնելուց հետո, ապա դրանց մասին պետք է բավականաչափ վաղ հայտնել, որպեսզի ժամանակ մնա դատարան կամ այլ մեխանիզմների դիմելով դրանք վիճարկելու համար: Ծանուցման ցանկացած ռեժիմ պետք է կիրառելի չլինի այն հավաքների նկատմամբ, որոնց պարագայում այլ անձանց վրա հավաքի ազդեցությունը, ըստ խելամիտ ակնկալիքների, նվազագույն է լինելու, օրինակ՝ պայմանավորված դրա բնույթով, անցկացման վայրով կամ սահմանափակ մասշտաբով կամ տևողությամբ: Տեղեկացման պահանջ չպետք է լինի ինքնաբուխ հավաքների դեպքում, երբ հանգամանքները բավարար ժամանակ չեն թողնում տեղեկացնելու համար:<sup>103</sup>

73. Երբ ներպետական օրենսդրության մեջ պահպանվում է թույլատրման ռեժիմը, այն պետք է պրակտիկայում գործի որպես տեղեկացման համակարգ, ընդ որում՝ թույլտվությունը պետք է բնականոն ձևով տրվի, եթե ծանրակշիռ պատճառներ չկան այլ կերպ վարվելու համար: Տեղեկացման ռեժիմներն իրենց հերթին չպետք է պրակտիկայում գործոն որպես թույլատրման ռեժիմներ:<sup>104</sup>

## VI. Իրավապահ մարմինների պարտականությունները և իրավունքները

74. Իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք, ովքեր մասնագիտական ծառայություն են իրականացնում հավաքների ընթացքում, պետք է հարգեն և երաշխավորեն կազմակերպիչների և մասնակիցների հիմնական իրավունքների իրականացումը՝ միևնույն ժամանակ նաև վնասից պաշտպանելով լրագրողներին,<sup>105</sup> դիտորդներին, բուժաշխատողներին և հանրության այլ անդամներին, ինչպես նաև հանրային և մասնավոր գույքը:<sup>106</sup> Իշխանությունների հիմնական մոտեցումը պետք է լինի անհրաժեշտության դեպքում խաղաղ հավաքների անցկացմանն աջակցելը:

75. Իրավապահ համապատասխան մարմինները պետք է հավաքից առաջ և հավաքի ընթացքում հնարավորինս ձգտեն կապի և երկխոսության ալիքներ ստեղծել հավաքին մասնակցող տարբեր սուբյեկտների միջև՝ նպատակ ունենալով ապահովել պատրաստվածությունը, թոթափել լարվածությունը և լուծել վեճերը:<sup>107</sup> Թեպետ կազմակերպիչների և մասնակիցների կողմից նման կապեր ձևավորելն համարվում է լավ պրակտիկա, նրանց չի կարելի այդպես վարվելու պահանջ ներկայացնել:

<sup>102</sup> CCPR/CO/83/KEN, պարբ. 23, CCPR/C/CHE/CO/4, պարբ. 48. CCPR/C/DZA/CO/4, պարբ. 45:

<sup>103</sup> *Popova v. Russian Federation*, պարբ. 7.5: Տե՛ս նաև Սարդու իրավունքների եվրոպական դատարան, *Éva Molnár v. Hungary*, պարբ. 38:

<sup>104</sup> CCPR/C/UZB/CO/5, պարբ. 46–47, CCPR/C/JOR/CO/5, պարբ. 32:

<sup>105</sup> CCPR/C/AGO/CO/1, պարբ. 21, CCPR/C/GEO/CO/4, պարբ. 12, ինչպես նաև CCPR/C/KOR/CO/4, պարբ. 52:

<sup>106</sup> A/HRC/31/66, պարբ. 41:

<sup>107</sup> Նույն տեղում, պարբ. 38:

76. Երբ պահանջվում է իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ներկայությունը, իրավապահ գործունեությունն հավաքի ընթացքում պետք է պլանավորել և իրականացնել՝ նպատակ հետապնդելով աջակցել, որպեսզի հավաքն ըստ նախատեսվածի տեղի ունենա, ինչպես նաև՝ նպատակ հետապնդելով նվազագույնի հասցնել որևէ անձի վնասվածք հասցնելու կամ որևէ գույքի վնաս պատճառելու հավանականությունը:<sup>108</sup> Ծրագրում պետք է մանրամասնորեն նկարագրված լինեն իրավասու բոլոր պաշտոնատար անձանց և ստորաբաժանումների հրահանգները, տեխնիկական միջոցները և տեղակայումը:

77. Իրավապահ համապատասխան մարմինները պետք է մշակեն նաև արտակարգ իրավիճակի ընդհանուր ծրագրեր և վերապատրաստման պրոտոկոլներ, մասնավորապես՝ այն հավաքների ընթացքում իրավապահ գործունեության կազմակերպման համար, որոնց մասին իշխանությունները նախապես չեն տեղեկացվում, կամ որոնք կարող են ազդել հանրային կարգի վրա:<sup>109</sup> Պետք է գոյություն ունենա իրամանատարական հստակ կառուցվածք, որն հաշվետու գործելակերպի հիմքն է: Պետք է ապահովվեն միջադեպերի արձանագրման և փաստաթղթավորման պրոտոկոլներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի պարզել իրավապահ մարմնում ծառայող անձանց ինքնությունը և արձանագրել ուժի գործադրման բոլոր դեպքերը:

78. Իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք պետք է ձգտեն թոթափել լարվածությունն այն իրավիճակներում, որոնք կարող են բռնության հանգեցնել: Նրանք պարտավոր են սպառել ոչ բռնի միջոցները և նախազգուշացում տալ, եթե բացարձակ անհրաժեշտ լինի ուժ գործադրել, բացառությամբ երբ ակնհայտ է, որ ոչ բռնի միջոցներ կիրառելը և նախազգուշացնելն արդյունք չեն տա: Ուժի ցանկացած գործադրում պետք է համահունչ լինի օրինականության, անհրաժեշտության, համաչափության, զգուշավորության և խտրականության բացառման՝ Դաշնագրի 6-րդ և 7-րդ հոդվածների նկատմամբ կիրառելի հիմնարար սկզբունքներին: Ուժ գործադրողները պարտավոր են հաշվետու լինել ուժի գործադրման յուրաքանչյուր դեպքի համար:<sup>110</sup> Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ուժի գործադրման ներպետական իրավական ռեժիմները պետք է համապատասխանեցնել միջազգային իրավունքի պահանջներին՝ ուղղորդվելով այնպիսի ստանդարտներով, ինչպիսիք են Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրը (անգլ.՝ «Code of Conduct for Law Enforcement Officials») և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին (անգլ.՝ «UN Human Rights Guidance on Less-Lethal Weapons in Law Enforcement»):<sup>111</sup>

<sup>108</sup> Մարդու իրավունքների խորհրդի թիվ 38/11 բանաձևը, նախաբանի պարբ. 10, ինչպես նաև A/HRC/26/36, պարբ. 51:

<sup>109</sup> A/HRC/31/66, պարբ. 37:

<sup>110</sup> Տե՛ս թիվ 36 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 13–14:

<sup>111</sup> Տե՛ս նաև Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրը (Code of Conduct for Law Enforcement Officials):



79. Հավաքի ընթացքում գործադրվող ուժը չպետք է անցնի անհրաժեշտ նվազագույնի սահմանը և պետք է գործադրվի միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է իրավապահ աշխատանքի իրավաչափ նպատակների համար: Երբ ուժը գործադրելու անհրաժեշտությունը կվերանա, օրինակ՝ երբ բռնի անհատն անվտանգ կերպով բերման կենթարկվի, ուժի գործադրումը շարունակելն այլևս թույլատրելի չէ:<sup>112</sup> Իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք իրավունք չունեն ավելի շատ ուժ գործադրել, քան՝ համաչափ է տվյալ հանգամանքներում հավաքը ցրելու, հանցագործությունները կանխելու կամ իրավախախտների կամ իրավախախտման մեջ կասկածվող անձանց օրինական ձերբակալումն ապահովելու կամ իրականացնելու համար:<sup>113</sup> Ներպետական օրենսդրությունը չպետք է իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ընձեռի անսահմանափակ լիազորություններ, օրինակ՝ հավաքը ցրելու համար «ուժ գործադրելու» կամ «անհրաժեշտ ողջ ուժը գործադրելու» լիազորություն: Ներպետական օրենսդրությունը չպետք է բավարար պաշտպանություն չընձեռող ընդհանրացված դրույթներ պարունակի, օրինակ՝ դրույթ, որում միայն նշված կլինի «ոտքերի ուղղությամբ կրակելու» մասին: Մասնավորապես, ներպետական օրենսդրությունը չպետք է թույլ տա հավաքի մասնակիցների նկատմամբ ուժ գործադրել կամայականորեն, չափից ավելի մեծ չափով կամ խտրական հիմունքներով:<sup>114</sup>

80. Հավաքների ընթացքում ծառայություն պետք է իրականացնեն միայն իրավապահ մարմինների այն ծառայողները, ովքեր հատուկ ուսուցանված կլինեն հավաքների ընթացքում ծառայություն կատարելու թեմայով, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերելի չափանիշների մասով:<sup>115</sup> Ուսուցման ընթացքում իրավապահ մարմինների ծառայողները պետք է տեղեկացվեն խոցելի վիճակում գտնվող անձանց կամ խմբերի՝ խաղաղ հավաքների մասնակցելու ընթացքում ունեցած առանձնահատուկ կարիքների մասին, որոնց շարքում կարող են լինել կանայք, երեխաները կամ հաշմանդամություն ունեցող անձինք: Բանակը չպետք է ներգրավվի հավաքների ընթացքում կազմակերպվող իրավապահ ծառայությանը,<sup>116</sup> սակայն եթե օժանդակելու նպատակով բացառիկ դեպքերում և ժամանակավորապես անհրաժեշտ է ներգրավել բանակը, ապա բանակի զինծառայողները պետք է մարդու իրավունքների վերաբերյալ պատշաճ ուսուցում ստացած լինեն և հետևեն միջազգային նույն կանոններին և չափանիշներին, ինչ՝ իրավապահ մարմիններում ծառայող անձինք:<sup>117</sup>

<sup>112</sup> Նույն տեղում, հոդվ. 3:

<sup>113</sup> Նույն տեղում, 3-րդ հոդվածի մեկնաբանությունները:

<sup>114</sup> CCPR/C/MAR/CO/6, պարբ. 45–46, CCPR/C/BHR/CO/1, պարբ. 55:

<sup>115</sup> CCPR/C/KHM/CO/2, պարբ. 12: CCPR/C/GRC/CO/2, պարբ. 42, ինչպես նաև CCPR/C/BGR/CO/4, պարբ. 38:

<sup>116</sup> CCPR/C/VEN/CO/4, պարբ. 14, ինչպես նաև Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում իրավապահ մարմինների կողմից հավաքների իրականացվող կատարվող իրավապահ ծառայության վերաբերյալ ուղեցուցիչները*, պարբ. 3.2:

<sup>117</sup> Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրը (Code of Conduct for Law Enforcement Officials), հոդվ. 1:

81. Հավաքների ընթացքում կազմակերպվող իրավապահ ծառայությանը մասնակցող բոլոր ծառայողները և պաշտոնատար անձինք պետք է պատշաճ տեխնիկական միջոցներ ունենան, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում կրեն պատշաճ և նպատակին համապատասխանող ոչ մահացու զենք և պաշտպանական միջոցներ: Մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի ցանկացած զենք, այդ թվում՝ ոչ մահացու զենքը, խիստ պահանջների պահպանմամբ ստուգվի անկախ սուբյեկտների կողմից, ինչպես նաև՝ դրանք կրող պաշտոնատար անձինք ստանան հատուկ ուսուցում, և մշտադիտարկել և գնահատել դրանց ազդեցությունն համապատասխան անձանց իրավունքների վրա:<sup>118</sup> Իրավապահ մարմինները պետք է զգոն լինեն՝ նկատալու և կանխելու համար ոստիկանական աշխատանքի որոշ մարտավարությունների հնարավոր խտրական ազդեցությունը, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների համատեքստում:<sup>119</sup>

82. Թիրախավորված անհատների կանխարգելիչ ազատազրկումը՝ հավաքին նրանց մասնակցությունը բացառելու նպատակով, կարող է կամայական ազատազրկում համարվել, ինչն անհամատեղելի է խաղաղ հավաքների իրավունքին:<sup>120</sup> Դա հատկապես տեղի է ունենում այն դեպքում, երբ ազատազրկումը մի քանի ժամից ավելի երկար է տևում: Եթե նման ազատազրկումը ներպետական օրենսդրությամբ թույլատրված է, ապա այն կարող է կիրառվել միայն խիստ բացառիկ դեպքերում,<sup>121</sup> ոչ ավելի քան բացարձակապես անհրաժեշտ է, և միայն այն դեպքում, երբ իշխանություններն ունեն ապացույցներ, որոնց համաձայն տվյալ անձինք մտադիր են կոնկրետ հավաքի ընթացքում կատարել կամ հրահրել բռնի գործողություններ, և երբ բռնության դրսևորումները կանխելու այլ միջոցներն ակնհայտորեն բավարար չեն լինի:<sup>122</sup> Հավաքից առաջ, հավաքի ընթացքում կամ հավաքից հետո առանց տարբերակման զանգվածային ձերբակալություններ կատարելու պրակտիկան կամայական է, ուստի և՛ անօրինական:<sup>123</sup>

83. Հավաքի մասնակիցների կամ հավաքին մասնակցել նախատեսող անձանց նկատմամբ «կանգնեցնելու և խուզարկելու» կամ «կանգնեցնելու և շոշափելով խուզարկելու» լիազորությունները պետք է իրականացվեն՝ ծանր հանցանք կատարած լինելու կամ ծանր հանցանք կատարելու վտանգի ողջամիտ կասկածի հիման վրա, և չպետք է կիրառվեն խտրական ձևով:<sup>124</sup> Այն պարզ փաստը, որ

<sup>118</sup> Թիվ 36 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 14: Տե՛ս նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին, 4-րդ բաժին, ինչպես նաև Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից զենքի և հրազենի գործադրման մասին հիմնարար սկզբունքները, 2-րդ սկզբունք:

<sup>119</sup> CCPR/C/GBR/CO/7, պարբ. 11, A/HRC/44/24, պարբ. 32:

<sup>120</sup> CCPR/C/MKD/CO/3, պարբ. 19:

<sup>121</sup> Թիվ 35 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 15:

<sup>122</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *S., V. and A. v. Denmark* (զանգաստեր թիվ 35553/12, 36678/12 և 36711/12), դատավճիռը՝ 22-ը հոկտեմբերի, 2018 թ. (Մեծ պալատ), պարբ. 77 և 127:

<sup>123</sup> CCPR/C/CAN/CO/6, պարբ. 15:

<sup>124</sup> CCPR/C/GBR/CO/7, պարբ. 11, CCPR/C/USA/CO/4, պարբ. 7:

իշխանություններն անհատներին կապում են խաղաղ հավաքի հետ, ողջամիտ հիմք չէ նրանց կանգնեցնելու և խուզարկելու համար:<sup>125</sup>

84. Շրջանով պարփակելը, երբ իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք շրջանի մեջ են առնում և սահմանափակում մասնակիցների մի որոշ մասի, կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է և համաչափ՝ կամ փաստացի բռնությանն արձագանքելու, կամ այդ հատվածում հնարավոր անմիջական վտանգը կանխելու նպատակով: Կոնկրետ անձանց թիրախավորող իրավապահ անհրաժեշտ գործողություններն հաճախ ավելի նախընտրելի են, քան՝ շրջանով պարփակելը: Պետք է հատուկ զգուշավորություն ցուցաբերել, որպեսզի հնարավորինս շրջանի մեջ առնվեն միայն այն անձինք, ովքեր ուղղակիորեն կապված են բռնության հետ, և որպեսզի շրջանի մեջ առնելու տևողությունը չզերազանցի անհրաժեշտ նվազագույն ժամկետը: Երբ շրջանի մեջ առնելն օգտագործվում է բոլորի հանդեպ անխտիր կամ որպես պատիժ, այն խախտում է խաղաղ հավաքների իրավունքը և կարող է խախտել նաև այլ իրավունքներ, օրինակ՝ կամայականորեն ազատությունից չզրկվելու իրավունքը և տեղաշարժի ազատության իրավունքը:<sup>126</sup>

85. Հավաքը ցրել կարելի է միմիայն բացառիկ դեպքերում: Ցրել կարելի է միայն այն դեպքում, երբ հավաքը որպես այդպիսին այլևս խաղաղ չէ, կամ երբ հստակ ապացույցներ կան ծանր բռնության վրահաս վտանգի մասին, որը չի կարող ողջամտորեն կանխվել ավելի համաչափ միջոցներով, օրինակ՝ թիրախային ձերբակալություններով: Ցանկացած պարագայում, սակայն, պետք է խստագույնս հետևել ձերբակալության վերաբերյալ իրավապահ համակարգի կանոններին: Հավաքը ցրելու մասին որոշում կայացնելու պայմանները պետք է ամրագրված լինեն ներպետական օրենսդրությամբ, և խաղաղ հավաքը ցրելու որոշում կարող է կայացնել միայն այն պաշտոնատար անձը, ով հավուր պատշաճի ունի նման որոշում կայացնելու իրավասություն: Հավաքը, որը մնում է խաղաղ, բայցևայնպես զգալիորեն խաթարում է հասարակության բնականոն կյանքը, օրինակ՝ տևական ժամանակ արգելափակում է ճանապարհային երթևեկությունը, կարող է որպես կանոն ցրվել միայն այն ժամանակ, երբ այդ խաթարումը «ծանր է և երկարատև»:<sup>127</sup>

86. Երբ հավաքը ցրելու մասին որոշումը կայացվել է ներպետական և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, ապա պետք է խուսափել ուժի գործադրումից: Եթե կոնկրետ հանգամանքներում դա հնարավոր չէ, ապա կարող է գործադրել միայն անհրաժեշտ նվազագույն ուժը:<sup>128</sup> Գործադրվող ցանկացած ուժ պետք է հնարավորինս ուղղված լինի այն կոնկրետ անհատի կամ խմբի դեմ, որը բռնություն է կիրառում կամ բռնության վտանգ է առաջացնում: Պասիվ դիմադրող

<sup>125</sup> A/HRC/31/66, պարբ. 43:

<sup>126</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Austin and others v. United Kingdom* (զանգաստներ թիվ 39629/09, 40713/09 և 41008/09), դատավճիռը՝ 15-ը մարտի, 2012 թ. (Մեծ պալատ), պարբ. 68:

<sup>127</sup> A/HRC/31/66, պարբ. 62:

<sup>128</sup> Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից զենքի և հրազենի գործադրման մասին հիմնարար սկզբունքները, 13-րդ սկզբունք, A/HRC/26/36, պարբ. 75:

անհատների կամ խմբերի նկատմամբ չպետք է գործադրվի այնքան ուժ, որի պատճառով առաջացող մարմնական վնասվածքն հավանաբար չի սահմանափակվի թեթև ծանրությամբ:<sup>129</sup>

87. Ոչ մահացու զենքի գործադրումը որոշակի տարածքում, մասնավորապես՝ արցունքաբեր գազի և ջրցանի գործադրումը, որպես կանոն ունենում է անխտիր ազդեցություն: Նման զենք օգտագործելիս ողջամիտ բոլոր ջանքերը պետք է գործադրել՝ սահմանափակելու համար խուճապահար փախուստի շրջանակում մարդկանց ոտնակոխ լինելու կամ կողմնակի դիտորդներին վնաս պատճառելու և համանման այլ ռիսկերը: Դրանք պետք է կիրառվեն, երբ հնարավոր բոլոր այլ միջոցներն սպառվել են, ընդ որում՝ դրանց կիրառությանը պետք է նախորդի բանավոր նախազգուշացումը, և հավաքի մասնակիցներին պետք է բավարար հնարավորություն տրվի ցրվելու համար: Արցունքաբեր գազը չպետք է օգտագործվի փակ տարածքներում:<sup>130</sup>

88. Հրազենը պատշաճ գործիք չէ հավաքների ընթացքում իրավապահ գործառնություններ կատարելու համար,<sup>131</sup> և հրազենը երբևէ չպետք է օգտագործվի պարզապես հավաքը ցրելու նպատակով:<sup>132</sup> Միջազգային իրավունքի նորմերին համապատասխանելու համար անհրաժեշտ է, որպեսզի հավաքների շրջանակում իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից հրազենի գործադրման ցանկացած դեպք սահմանափակվի միայն թիրախավորված կոնկրետ անհատներով՝ այնպիսի հանգամանքներում, որոնցում դա խստագույնս անհրաժեշտ է մահվան կամ ծանր մարմնական վնասվածքի վրահաս վտանգին դիմակայելու համար:<sup>133</sup> Հաշվի առնելով նման զենքի վտանգավորությունը կյանքի համար, նվազագույն այդ շեմը պետք է կիրառելի լինի նաև ռետինապատ մետաղյա փամփուշտներ կրակելու նկատմամբ:<sup>134</sup> Երբ իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք պատրաստ են ուժ գործադրել կամ բռնությունն հավանական է համարվում, իշխանությունները պարտավոր են նաև ապահովել համարժեք բժշկական ծառայությունների հասանելիությունը: Հավաքի ընթացքում իրավապահ գործառնություններ կատարելիս

<sup>129</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին, պարբ. 2.10:

<sup>130</sup> S/2009/693, հավելվածը, պարբ. 62, ինչպես նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին, պարբ. 7.3.7:

<sup>131</sup> Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ACHPR) *Աֆրիկայում իրավապահ մարմինների կողմից հավաքների իրականացվող կատարվող իրավապահ ծառայության վերաբերյալ ուղենիշները*, պարբ. 21.2.4:

<sup>132</sup> Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից զենքի և հրազենի գործադրման մասին հիմնարար սկզբունքները, 14-րդ սկզբունք:

<sup>133</sup> Թիվ 36 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 12, Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից զենքի և հրազենի գործադրման մասին հիմնարար սկզբունքները, 9-րդ և 14-րդ սկզբունքներ:

<sup>134</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին, պարբ. 7.5.8:

անխտիր կրակ արձակելը կամ հրազենը լիովին ավտոմատ ռեժիմով գործածելը երբեք չի կարող օրինական լինել:<sup>135</sup>

89. Միջազգային իրավունքի նորմերի համաձայն՝ պետությունը պատասխանատվություն է կրում իր իրավապահ մարմինների գործողությունների և բացթողումների համար: Խախտումները կանխելու նպատակով պետությունները պետք է մշտապես խրախուսեն հաշվետու գործելակերպն հավաքների ընթացքում իրավապահ գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց շրջանում: Արդյունավետ հաշվետվողականությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի իրավապահ մարմինների համազգեստավոր պաշտոնատար անձինք հավաքների ընթացքում իրենց համազգեստի վրա մշտապես կրեն անձի նույնացման հեշտ ճանաչելի միջոցներ:<sup>136</sup>

90. Պետությունները պարտավորություն ունեն՝ արդյունավետ, անկողմնակալ և ժամանակին քննելու հավաքների ընթացքում իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ուժի անօրինական գործադրման կամ այլ խախտումների (ներառյալ՝ գենդերով կամ սեռով պայմանավորված բռնության) մասին ցանկացած պնդում կամ ողջամիտ կասկած:<sup>137</sup> Թե՛ դիտավորյալ, թե՛ անփութորեն կատարված ցանկացած գործողություն և անգործություն կարող է մարդու իրավունքների խախտում առաջացնել: Խախտումների համար պատասխանատու պաշտոնատար անձինք պետք է անհատապես պատասխանատվության ենթարկվեն ներպտական օրենսդրության, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև միջազգային իրավունքի ներքո, իսկ տուժողներին պետք է հասանելի լինեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները:<sup>138</sup>

91. Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ուժի ցանկացած գործադրում պետք է հավուր պատշաճի արձանագրվի և անհապաղ արտացոլվի թափանցիկ զեկույցի մեջ: Երբ պատճառվել է վնաս կամ մարմնական վնասվածք, զեկույցը պետք է բավարար տեղեկություններ պարունակի՝ պարզելու համար, թե արդյոք ուժի գործադրումն անհրաժեշտ և համաչափ է եղել՝ մանրամասնելով դեպքը,

<sup>135</sup> A/HRC/31/66, պարբ. 60, 67(e): Տե՛ս նաև OHCHR/UNODC, *Resource Book on the Use of Force and Firearms in Law Enforcement* (2017), էջ 96:

<sup>136</sup> Համեմատության համար տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Hentschel and Stark v. Germany* (զանգատ թիվ 47274/15), դատավճիռը՝ 9-ը նոյեմբերի, 2017 թ., պարբ. 91, ինչպես նաև CAT/C/DEU/CO/6, պարբ. 40:

<sup>137</sup> CCPR/C/COD/CO/4, պարբ. 43–44, CCPR/C/BHR/CO/1, պարբ. 36: Տե՛ս նաև *Վնօրինական մահվան հնարավոր դեպքերի քննության մասին Մինեսոտայի արձանագրությունը (Minnesota Protocol on the investigation of potentially unlawful death)* (2016 թ.) (Միավորված ազգերի կազմակերպության հրապարակում, Sales No. E.91.IV.1):

<sup>138</sup> A/RES/60/147, հավելվածը:

այդ թվում՝ ուժի գործադրման պատճառները, արդյունավետությունը և հետևանքները:<sup>139</sup>

92. Հավաքների ընթացքում քաղաքացիական հագուստ կրող իրավապահ ծառայողների տեղակայելը պետք է խստագույնս անհրաժեշտ լինի՝ ելնելով տվյալ հանգամանքներից, և այդ իրավապահ ծառայողները չպետք է երբևէ բռնություն սերմանեն: Նախքան խուզարկություն կամ ձերբակալություն կատարելը կամ ուժ գործադրելը՝ քաղաքացիական հագուստ կրող իրավապահ ծառայողները պարտավոր են ներկայանալ համապատասխան անձանց:

93. Պետությունն է ի վերջո պատասխանատու հավաքի իրավապահ ծառայողների գործողությունների համար, և պետությունը միայն բացառիկ դեպքերում իրավունք ունի համապատասխան գործառույթները պատվիրակել անվտանգության մասնավոր ծառայություններին:<sup>140</sup> Դրան ի լրումն՝ անվտանգության մասնավոր ծառայությունները որոշակի պատասխանատվություն են կրում ներպետական օրենսդրության և համապատասխան դեպքերում՝ նաև միջազգային իրավունքի նորմերի ներքո:<sup>141</sup> Անվտանգության մասնավոր ծառայությունների դերը և լիազորություններն իրավապահ գործառույթներ կատարելու հարցում պետք է սահմանվեն իշխանությունների կողմից ազգային օրենսդրության մեջ, և պետք է խստորեն կանոնակարգել նրանց կողմից ուժի գործադրման և նրանց ուսուցանման հարցերը:<sup>142</sup>

94. Հավաքների ընթացքում իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից տեսագրող կամ ձայնագրող սարքերի, այդ թվում՝ անձի վրա տեղադրված տեսախցիկների կիրառությունը կարող է դրական դեր խաղալ հաշվետվողականությունն ապահովելու գործում, եթե դրանք խելամտորեն օգտագործվեն: Այնուհանդերձ, իշխանությունները պետք է հստակ և հանրությանն հասանելի ուղենիշներ ունենան՝ ապահովելու համար դրանց օգտագործման համապատասխանությունն անձնական կյանքի վերաբերյալ միջազգային չափանիշներին, և որպեսզի դրանց օգտագործումը կաշկանդող ազդեցություն չունենա հավաքներին մասնակցության վրա:<sup>143</sup> Մասնակիցները, ինչպես նաև

<sup>139</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին, պարբ. 3.3–3.5:

<sup>140</sup> Թիվ 36 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 15:

<sup>141</sup> Համեմատության համար տե՛ս *Անվտանգության ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների վարքագծի միջազգային կանոնադիրքը (International Code of Conduct for Private Security Service Providers)* (2010 թ.):

<sup>142</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ուղեցույցն իրավապահ համակարգում ոչ մահացու զենքի օգտագործման մասին, պարբ. 3.2:

<sup>143</sup> CCPR/C/CHN-HKG/CO/3, պարբ. 10, ինչպես նաև CCPR/C/CHN-MAC/CO/1, պարբ. 16:

լրագրողները և դիտորդները, նույնպես իրավունք ունեն տեսագրել և ձայնագրել իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց:<sup>144</sup>

95. Պետությունը լիովին պատասխանատու է հեռակառավարվող զենքի ցանկացած համակարգեր հավաքի ընթացքում կիրառելու համար: Ուժի գործադրման նման մեթոդները կարող են ավելացնել լարվածությունը և պետք է օգտագործվեն միմիայն մեծ զգուշավորությամբ: Ձենքի ամբողջովին ավտոմատ համակարգերը, որոնց պարագայում մահացու ուժ կարող է գործադրվել հավաքի մասնակիցների նկատմամբ՝ առանց համակարգի աշխատանքը մեկնարկելուց հետո այդ գործընթացին մարդկային որևէ իմաստալից միջամտության, երբևէ չպետք է օգտագործվեն իրավապահ մարմինների կողմից հավաքի ընթացքում:<sup>145</sup>

## **VII. Հավաքներն արտակարգ իրավիճակների և զինված հակամարտությունների ընթացքում**

96. Խաղաղ հավաքների իրավունքը ներառված չէ Դաշնագրի 4 (2) հոդվածում թվարկված այն իրավունքների ցանկում, որոնցից թույլատրել չեն շեղումներ (դերոզացիաներ), սակայն կան հավաքների պարագայում կիրառելի այլ իրավունքներ, օրինակ՝ 6-րդ, 7-րդ և 18-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները, որոնցից շեղումները (դերոզացիաները) թույլատրելի չեն: Մասնակից պետությունները չպետք է շեղվեն խաղաղ հավաքների իրավունքի երաշխավորելու իրենց պարտավորությունից, եթե կարող են իրենց նպատակներին հասնել՝ սահմանափակումներ կիրառելով 21-րդ հոդվածի իմաստով:<sup>146</sup> Եթե Դաշնագրի մասնակից պետությունները, արձագանքելով օրինակ զանգվածային ցույցերին, որոնք ներառում են բռնության արարքներ, շեղվում են այդ իրավունքներն հարգելու իրենց պարտավորությունից, ապա նրանք պետք է ի վիճակի լինեն հիմնավորել ոչ միայն այն, որ տվյալ իրավիճակը վտանգ է պարունակում ազգյի կյանքի համար, այլ նաև այն, որ Դաշնագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումից շեղվող բոլոր միջոցառումները խստորեն անհրաժեշտ են՝ ելնելով իրավիճակի հրատապությունից և խստորեն համապատասխանում են 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին:<sup>147</sup>

97. Զինված հակամարտության իրավիճակում խաղաղ հավաքների ընթացքում ուժի գործադրումը շարունակում է կարգավորվել իրավապահ գործունեության

<sup>144</sup> A/HRC/31/66, պարբ. 71:

<sup>145</sup> Նույն տեղում, պարբ. 67:

<sup>146</sup> Նույն տեղում, պարբ. 5, ինչպես նաև թիվ 29 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 5: Տե՛ս նաև CCPR/C/128/2, պարբ. 2 (c):

<sup>147</sup> Թիվ 29 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 5–9:

նկատմամբ կիրառելի կանոններով, և Դաշնագիրը շարունակում է գործել:<sup>148</sup> Հավաքի ընթացքում քաղաքացիական անձինք պաշտպանված են մահացու ուժի գործադրման թիրախ դառնալուց, բացառությամբ երբ նրանք ուղղակիորեն մասնակցում են մարտական գործողություններին, և միմիայն այդ գործողություններին մասնակցելու ընթացքում՝ հաշվի առնելով «մարտական գործողություններ» եզրույթի՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով նախատեսված սահմանումը: Նման իրավիճակում նրանք կարող են թիրախավորվել միայն այնքանով, որքանով նրանք միջազգային իրավունքի ներքո պաշտպանված չեն հարձակումից: Ուժի ցանկացած գործադրում միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի համաձայն պետք է համապատասխանի տարբերակման, հարձակման ժամանակ զգուշավորության, համաչափության, զինվորական անհրաժեշտության և մարդասիրության կանոններին և սկզբունքներին: Ուժի գործադրմանը վերաբերող բոլոր որոշումներում կարևոր գործոն պետք է լինի հավաքի մասնակիցների և հանրության լայն շրջանակների անվտանգությունը և պաշտպանություները:

### **VIII. Դաշնագրի 21-րդ հոդվածի և Դաշնագրի այլ դրույթների և իրավական այլ ռեժիմների հարաբերակցությունը**

98. Խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք պաշտպանությունը կախված է մի շարք իրավունքների պաշտպանությունից: Անհարկի կամ անհամաչափ ուժի գործադրումը կամ պետական պաշտոնատար անձանց այլ անօրինական գործողություններն հավաքի ընթացքում կարող են խախտել Դաշնագրի 6-րդ, 7-րդ և 9-րդ հոդվածները:<sup>149</sup> Ծայրահեղ դեպքում, երբ խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ անօրինական ուժ է գործադրվում կամ անօրինական գործողություններ են կատարվում՝ քաղաքացիական բնակչության որևէ խմբի դեմ ուղղված տարածական կամ համակարգային հարձակման շրջանակում, դա կարող է այլ կիրառելի չափանիշներին համապատասխանելու դեպքում միաժամանակ համարվել նաև մարդկության դեմ ուղղված հանցագործություն:<sup>150</sup>

99. Հավաքներին մասնակցելու նպատակով ճանապարհորդելու, այդ թվում՝ արտերկիր ճանապարհորդելու (հոդված 12 (2)) և երթերի և շարժվող այլ հավաքների մասնակցելու՝ մարդկանց հնարավորությունը սահմանափակելը կարող է խախտել նրանց տեղաշարժի ազատությունը (հոդված 12 (1)): Հավաքի իրավունքների

<sup>148</sup> Թիվ 36 ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 64:

<sup>149</sup> CCPR/C/ISR/CO/3, պարբ. 9, CCPR/C/UZB/CO/3, պարբ. 8, և *Olmedo v. Paraguay* (CCPR/C/104/D/1828/2008), պարբ. 7.5, *Benítez Gamarra v. Paraguay* (CCPR/C/104/D/1829/2008), պարբ. 7.4:

<sup>150</sup> Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտը, 1998 թ., հոդված 7:



իրականացումը սահմանափակող պաշտոնական որոշումները պետք է հնարավոր լինի իրավական ճանապարհով վիճարկել, ընդ որում՝ գործընթացը պետք է համապատասխանի արդար և հրապարակային դատաքննության պահանջներին (հոդված 14 (1)):<sup>151</sup> Հավաքների մասնակիցների նկատմամբ հսկողությունը և տվյալների հավաքագրման այլ միջոցառումները կարող են խախտել նրանց անձնական կյանքի իրավունքը (հոդված 17): Կրոնական հավաքները կարող են պաշտպանված լինել նաև սեփական կրոնը կամ հավատը դրսևորելու ազատության շրջանակում (հոդված 18):<sup>152</sup> Խաղաղ հավաքների իրավունքը զուտ արտահայտվելու ազատության (հոդված 19 (2)) դրսևորում չէ, սակայն հաճախ իր մեջ պարունակում է արտահայտվելու բաղադրիչը, և այդ երկու իրավունքները և ընդունելի սահմանափակումները ճանաչելու տրամաբանական պատճառները շատ առումներով համընկնում են: Պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվությունն ստանալու ազատությունը (հոդված 19 (2)) կարևորագույն նախապայման է, որպեսզի հանրությունը կարողանա իմանալ հավաքների նկատմամբ կիրառելի իրավական և վարչական դաշտի մասին և հնարավորություն ունենա հաշվետու գործելակերպ պահանջելու պետական պաշտոնատար անձանցից:

100. Կոլեկտիվ գործողությունները պաշտպանված են նաև միավորման ազատության (հոդված 22) շրջանակում, և այս իրավունքի սահմանափակումներն հաճախ ազդում են խաղաղ հավաքների իրավունքի վրա: Քաղաքական մասնակցության իրավունքը (հոդված 25) սերտորեն կապված է խաղաղ հավաքների իրավունքի հետ, և համապատասխան դեպքերում սահմանափակումները պետք է հիմնավորված լինեն միաժամանակ և՛ 21-րդ, և՛ 25-րդ հոդվածներով նախատեսված պայմանների ներքո:<sup>153</sup> Խտրականության չենթարկվելու իրավունքի շրջանակում հավաքի մասնակիցները պաշտպանված են հավաքների պարագայում հնարավոր խտրական գործելակերպից (հոդվածներ 2 (1), 24 և 26):

101. Միևնույն ժամանակ, մասնակցությունը խաղաղ հավաքներին կարող է 21-րդ հոդվածի համաձայն սահմանափակվել այլ անձանց իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով:

102. Խաղաղ հավաքների իրավունքը լրջագույն կարևորություն ունի: Ավելին, այն հաճախ իրականացվում է մարդու այլ իրավունքների իրականացմանն աջակցելու, ինչպես նաև միջազգային իրավունքների այլ նորմերի և սկզբունքների կատարումն ապահովելու նպատակով: Նման դեպքերում խաղաղ հավաքների իրավունքը

<sup>151</sup> *Evrezov et al. v. Belarus*, պարբ. 3.3 և 8.9:

<sup>152</sup> Տե՛ս թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 8:

<sup>153</sup> *Sudalenko v. Belarus*, պարբ. 8.6:

հարգելու և երաշխավորելու պարտավորությունն իրավական տեսանկյունից բխում է նաև այլ իրավունքների, նորմերի և սկզբունքների ավելի ընդգրկուն շրջանակի կարևորությունից, որոնց ապահովմանը նպաստում է խաղաղ հավաքների իրավունքի իրականացումը:

---